Արմավիրում գյուղատնտեսությամբ զբաղվող Գրիգոր Բեկնազարյանը պատմեց, որ վարունգ եւ լոլիկ է աճեցնում, ամեն տարի կարողանում է այդ գումարներով ընտանիքը պահել, այս տարի անգամ սերմերի, ոռոգման ջրի եւ իր աշխատողների գումարը չի կարողանում հանել, նախորդ տարի 200-300 դրամով են վաճառել, այս տարի՝ 70-ով:

Կարդացեք՝ էջ 4

Քաղբանտարկյալ կենդանիների առկայությունը Հայաստանի ամոթն ու խայտառակությունն է, շատ երկրներում տարբեր ժամանակներում եղել են քաղաքական դրդապատճառներով հետապնդվող, սպանվող, կալանավորվող մարդիկ, բայց կենդանիներ չեն եղել: Մարդիկ գիտեն, թե ինչի համար են ենթարկվում նման ճնշումների, կենդանիները չգիտեն:

Կարդացեք՝ էջ 5

Հայաստանի՝ ցորենով ինքնաբավության մակարդակը 22,8 տոկոս է՝ ավելի քան 2 անգամ պակաս 10 տարի առաջվա մակարդակից: Այն ժամանակ եղել է 53.2%: Սպառվող ցորենի մոտ 77 տոկոսը ներմուծվել է ՌԴ-ից: Խորհրդակցության ժամանակ Փաշինյանը փորձել է իր ենթականերից տեղեկանալ, թե որքան ցորեն կարելի է ցանել Հայաստանում:

Կարդացեք՝ էջ 6

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 116 (4251), 14 հուլիս, երեքշաբթի, 2026

www.hraparak.am

Թեժ մրցակցություն է սպասվում ԱԺ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների համար: Հատկապես ծանր մարտեր են ընթանում պաշտպանության, անվտանգության մշտական հանձնաժողովի ղեկավարի պաշտոնի համար: Մեր տեղեկություններով, առաջադրվել է չորս թեկնածու. հանձնաժողովի փոխնախագահ Արմեն Խաչատրյանը, որը նաեւ վարչության անդամ է, վարչության մեկ այլ անդամ՝ Վիլեն Գաբրիելյանը, ԵԿՄ ղեկավար Սասուն Միքայելյանը եւ շրջակա միջավայրի նախկին նախարար Հակոբ Սիմիդյանը: Ուշագրավ է, որ նա անգամ բանակում չի ծառայել, սակայն հավակնում է ԱԺ պաշտպանության հանձնաժողովը ղեկավարել, նրա պաշտոնական կենսագրության մեջ էլ ծառայության մասին ոչ մի տող չկա: Պակաս ուշագրավ չէ նաեւ Սասուն Միքայելյանի առաջադրման փաստը, սա նշանակում է, որ նա վերցնում է պատգամավորական մանդատը եւ մտնում խորհրդարան: Մենք վերջերս գրել էինք, որ նա ուզում է մանդատը վերցնել, քանի որ առաջիկայում, ըստ լուրերի, ԵԿՄ-ն լուծարվելու է՝ «Վետերանների միություն» ՀԿ է դառնալու: Իսկ հանձնաժողովի գործող նախագահ Անդրանիկ Քոչարյանը չի առաջադրվել, նա իր վերջին ճեպազրույցում հայտնել էր, որ եթե խմբակցությունն ընտրի հանձնաժողովի նախագահին, ապա կառաջադրվի, եթե ոչ, ամենայն հավանականությամբ, կհրաժարվի՝ ակնարկելով, թե՝ քանի որ ինքն անկուսակցական է, անհավասար պայմաններում է գտնվում ՔՊ-ական թեկնածուների հետ:

Հուլիսի 12-ին Իջեւան համայնքի Խաշթառակ գյուղում հուղարկավորեցին հուլիսի 10-ին Գետահովիտ գյուղի Խաչաղբյուր գետում մահացած Էրիկ Սարիբեկյանին: Տեղեկություններ կան, որ Էրիկը ջուրն է նետվել, որ լողա, գլուխը դիպել է քարին, վնասվածք է ստացել, որի հետեւանքով գետում խեղդվել է: Խաշթառակ գյուղից տեղեկացանք, որ 19-ամյա Էրիկ Սարիբեկյանը պայմանագրային զինծառայող էր՝ «Պաշտպան հայրենյաց» ծրագրի մասնակից, ծառայում էր Տավուշի մարզում: Նա տան միակ տղան էր, երկու քույրերն ամուսնացած են: Սարիբեկյանների ընտանիքը կարիքավոր է, ընտանիքին օգնելու համար Խաշթառակի բնակիչները Էրիկի հուղարկավորության օրը դրամահավաք էին կազմակերպել:

Ազգային ախոռն ու մենք

Երբ առաջնորդի լեքսիկոնը բաղկացած է բացառապես սպառնալիքներից ու հայհոյանքից, երբ կիրառում է «կսատկացնեմ», «կնստացնեմ», «կկզացնեմ» բառերը, պետք չէ զարմանալ, որ թիմակիցներն էլ փորձում են նմանվել նրան, եւ այս լեզուն դառնում է երկրով մեկ տիրապետող: Տարիներ շարունակ այս վայ-իշխանություններից լսում ենք, թե ինչպես են սպառնում ու վիրավորում ընդդիմադիրներին, ինչպես են խոստանում հաշվեհարդար տեսնել իրենց քննադատողների հետ, ինչ լեքսիկոնով են արտահայտվում ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած ուժերի, հոգեւորականների, լրագրողների, առհասարակ՝ իրենց քաղաքականությունը մերժողների հասցեին: Այս խոսույթը շղթայական ռեակցիայով տարածվում է, իջնում մինչեւ վերջին ՔՊ-ականն ու ՔՊ համակիրը, դառնում հանրային շփման ձեւ: Ավելին՝ բոլոր այն ՔՊ-ականները, որոնք չեն ենթարկվում այս կանոններին, չեն հայհոյում կամ քիչ են հայհոյում, մղվում են հետին պլան, առաջին պլան են գալիս հայհոյախոսները, անկիրթներն ու խուլիգանները: Այս տեսանկյունից բոլորովին զարմանալի չէ, որ այսուհետ ԱԺ նախագահությունում տեսնելու ենք այդ եռյակին՝ Ռուբեն Ռուբինյան, Հայկ Կոնջորյան, Վահագն Ալեքսանյան: Այս եռյակն «արդարացրել» է Նիկոլ Փաշինյանի հույսերը եւ ընդդիմության հասցեին զազրախոսելու գծով մրցակիցներ ՔՊ-ում չունի: Զարմանալի չէ, որ ԱԺ անցած ՔՊական կին պատգամավորներն էլ են սկսել խոսել նույն բառապաշարով՝ լկտի, մեծամիտ, վիրավորական, սպառնալից տեքստերով: Եվ անգամ մեր նախկին գործընկեր՝ զուսպ ու պարկեշտ Բաբկեն Թունյանն է այս մերժելի խոսույթը յուրացրել: Իրենց առաջնորդի ոգով սրանք սպառնում են ընդդիմությանը, թե՝ կգաք խորհրդարան, ձեր հալը կտեսնեք: Այս պահվածքն է պատճառը, որ ՀՀ քաղաքացիներն ԱԺ-ն Ազգային ախոռ են անվանում:

Չնայած Նիկոլ Փաշինյանը Ռուսաստանից վերադառնալուց հետո հայտարարեց, որ արտահանումների հետ կապված խնդիրները հարթվել են, եւ շուտով կվերսկսեն հայկական ապրանքները ռուսական շուկա ուղարկել՝ ակնարկելով, որ ՌԴ վարչապետի հետ հանդիպումն արդյունավետ է անցել, եւ հարթվել են հակասությունները, սակայն մենք տեղեկացանք, որ խոշոր արտահանող ընկերություններից «Սպայկայի» աշխատողներին շուրջ երկու ամիս է՝ աշխատավարձ չեն տվել կամ մասնակի են տվել՝ պատճառաբանելով արտահանումների հետ կապված խոչընդոտները: Փորձեցինք ընկերությունից պարզաբանումներ ստանալ, սակայն որեւէ հեռախոսահամարի չպատասխանեցին: Մյուս կողմից, եթե իսկապես Փաշինյանի ասածով խնդիրը լուծված լիներ, ապա իշխանական պրոպագանդան հարյուրավոր տեսանյութեր կտարածեր արտահանումների գործընթացի վերականգնման մասին:

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԴՈՒՌԸ ՄԻ ՓԱԿԵՔ

Արցախի ԱԺ նախագահի պաշտոնի համալրման հարցը կարծես փակուղի է մտել: ԱՀ խորհրդարանի ամենամեծ՝ «Ազատ հայրենիք» խմբակցությունը, մեր աղբյուրների փոխանցմամբ, ցանկություն չունի, ավելի ճիշտ՝ վախենում է թեկնածու առաջադրել, որ չհայտնվեն Նիկոլ Փաշինյանի թիրախում: Բաքվում պատանդառված Արայիկ Հարությունյանի թիմակիցներից շատերն աշխատանքի են անցել Հայաստանում, իշխանական կամ իշխանամերձ հաստատություններում: Օրինակ, նույն ֆրակցիայից Արամ Հարությունյանը ՀայէկոնոմԲանկի մասնաճյուղերից մեկի կառավարիչն է եւ եթե Արցախի պետական ինստիտուտը պահպանելուն միտված քայլ անի, կզրկվի աշխատանքից: Ավելին, անգամ Սամվել Բաբայանն ու թիմակիցներն ավելի լոյալ են տրամադրված, հակված են, որ շարունակվի պետական ինստիտուտի գործունեությունը, սակայն «Ազատ հայրենիքում» վերջերս քննարկել են եւ վերջնական որոշման չեն հանգել, ու հնարավոր է՝ եթե այլ խմբակցությունից թեկնածու առաջադրեն, ամենամեծ խմբակցության պատգամավորները չներկայանան նիստին, ընտրությունը տապալվի: Այդուհանդերձ, քննարկումները շարունակվում են, արցախցիները փորձում են պատգամավորներին համոզել, որ Արցախի հարցի բանալին իրենց ձեռքում է՝ չի կարելի վերադարձի դուռը մեկընդմիշտ փակել: Հիշեցնենք, որ հուլիսի 2-ին Արցախի ԱԺ նախագահ Աշոտ Դանիելյանն անսպասելի հրաժարական տվեց:

ԼԱՐՏԵՐ

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԸ ԹՈԹԱՓՈՒՄ Է 9 ՏՈԿՈՍԱՆՈՑ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Օրեր առաջ գրել էինք, որ Երեւանի վարչական շրջանների ղեկավարների փոփոխություններ են սպասվում. իրենց պաշտոններին հրաժեշտ կտան բոլոր այն թաղապետերը, ովքեր իրենց ղեկավարած համայնքներում հունիսի 7-ի ընտրություններին ՔՊ-ի համար շռնդալից արդյունք չեն ապահովել: Անցած շաբաթվա վերջին առաջին ծիծեռնակը եղավ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը եղավ: Ավելին, տեղեկություններ կային, որ Կատվալյանը հեռահար կառավարել է նաեւ իր հաջորդին՝ Արման Բարխուդարյանին, որի դեմ գնումների գործով քրեական վարույթ կար:

Սաշա Կատվալյանը Տիգրան Ավինյանի շրջապատից է, եթե չասենք՝ նրա մտերիմը, եւ նրա թեկնածությունն էլ առաջ է «բրթել» Ավինյանը՝ կուսակցությունում բարձրացնելով Կատվալյանին խրախուսելու հարցը: Մեր աղբյուրներն ասում են, որ այս վարչական շրջանում ՔՊ-ի տարած բարձր տոկոսները հենց «Սաշի» աշխատանքի արդյունքն են համարել, իսկ իր հայրենի Չորրորդ գյուղում նա ուղղակի «բոմբել» է: Նշենք, որ Մալաթիա վարչական շրջանն ընտրությունների արդյունքներով զիջել է միայն Շենգավիթին, որտեղ ՔՊ-ն 50,2 տոկոս է ստացել, իսկ Մալաթիայում 49,7 տոկոս ձայն էր տարել: Սաշա Կատվալյանը թաղապետի պաշտոնից ազատվեց պատերազմից հետո՝ 2022թ. հոկտեմբերի 24-ին՝ իր համար ճակատագրական դարձած մի ֆեյսբուքյան գրառումից հետո, որով քննադատել էր Եռաբլուրում զոհվածների մայրերի նկատմամբ եւ նշանակվեց իր քաղաքապետ ընկերոջ խորհրդական, իսկ արդեն 2024թ. հունվարին «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» հիմնարկի տնօրեն նշանակվեց: Ի դեպ, Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանում ահուսարսափով են սպասում նոր շեֆի գալուն, նախորդ պաշտոնավարման ժամանակ նա կադրային մսաղաց է արել՝ պաշտոնները համալրելով բացառապես յուրայիններով:

Նկատենք, որ Կատվալյանի նշանակումով Տիգրան Ավինյանի դիրքերը Երեւանում ուժեղանում են: Թիմում կարծում են, որ Ավինյանը հունիսի 7-ից հետո այլեւս չունի «ոչ լեգիտիմ» քաղաքապետի համբավ, եւ այլեւս չեն կարող նրա երեսով տալ, որ չունի ժողովրդի մեծամասնության քվեն՝ 9 տոկոսանոց քաղաքապետ է, ավելին՝ այդ պաշտոնին ընտրվել է միայն գործընկեր ուժերի եւ հատկապես Դոգի աջակցության շնորհիվ: Խորհրդարանական ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանն էլ նրա ճակատագրին արժանացավ, եթե չասենք՝ ավելի վատ վիճակում հայտնվեց: Նա չունի մեծամասնության քվեն եւ նրանի ղեկավար, ԵԿՄ անդամ Ռոմիկ Մխիթարյանը, որը ՔՊ-ի կոալիցիոն գործընկեր «Հանրապետություն» կուսակցության անդամ է եւ Արամ Զավենիչի ղեկավարած կուսակցության քվոտայով է նշանակվել Մալաթիայի թաղապետ: Բնականաբար, նրանից առանձնապես ակնկալիքներ չկային, որ կարող էր ՔՊ-ի համար աշխատել, այլ ոչ թե ընտրություններին մասնակցող իր հարազատ կուսակցության: Սակայն նրան փոխարինեցին նույն վարչական շրջանի նախկին ղեկավար Սաշա Կատվալյանով, որը, մեղմ ասած, այդ պաշտոնից հեռանալիս լավ հիշողություններ չի թողել: Երեկ արդեն նշանակման հրամանը եղավ: Ավելին, տեղեկություններ կային, որ Կատվալյանը հեռահար կառավարել է նաեւ իր հաջորդին՝ Արման Բարխուդարյանին, որի դեմ գնումների գործով քրեական վարույթ կար:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

Սաշա Կատվալյանը Տիգրան Ավինյանի շրջապատից է, եթե չասենք՝ նրա մտերիմը, եւ նրա թեկնածությունն էլ առաջ է «բրթել» Ավինյանը՝ կուսակցությունում բարձրացնելով Կատվալյանին խրախուսելու հարցը: Մեր աղբյուրներն ասում են, որ այս վարչական շրջանում ՔՊ-ի տարած բարձր տոկոսները հենց «Սաշի» աշխատանքի արդյունքն են համարել, իսկ իր հայրենի Չորրորդ գյուղում նա ուղղակի «բոմբել» է: Նշենք, որ Մալաթիա վարչական շրջանն ընտրությունների արդյունքներով զիջել է միայն Շենգավիթին, որտեղ ՔՊ-ն 50,2 տոկոս է ստացել, իսկ Մալաթիայում 49,7 տոկոս ձայն էր տարել: Սաշա Կատվալյանը թաղապետի պաշտոնից ազատվեց պատերազմից հետո՝ 2022թ. հոկտեմբերի 24-ին՝ իր համար ճակատագրական դարձած մի ֆեյսբուքյան գրառումից հետո, որով քննադատել էր Եռաբլուրում զոհվածների մայրերի նկատմամբ ոստիկանական գործողությունները. «Եռաբլուրում որեւէ ակցիայի իրականացումը երբեւէ չեմ ընդունել ու չեմ ընդունի: Եռաբլուրը քաղաքական խաղերի, կոչերի ու բողոքի վայր չի եղել ու չպիտի լինի: Այսօր ոստիկանական ուժերը գործել են առնվազն ոչ պրոֆեսիոնալ եւ շատ վատ ձեւով բերման են ենթարկել զոհվածների մայրերին: Որպես Արցախյան պատերազմում զոհվածի որդի եմ ասում՝ ոստիկանության գործելաոճը սխալ էր ու դատապարտելի: Տղերք, կարմիր գծեր կան, որ չպետք է անցնել»:

Կատվալյանը, սակայն, լինելով Ավինյանի ընկերը, անգործ չմնաց եւ նշանակվեց իր քաղաքապետ ընկերոջ խորհրդական, իսկ արդեն 2024թ. հունվարին «Երեւանի աղբահանություն եւ սանիտարական մաքրում» հիմնարկի տնօրեն նշանակվեց: Ի դեպ, Մալաթիա-Սեբաստիայի թաղապետարանում ահուսարսափով են սպասում նոր շեֆի գալուն, նախորդ պաշտոնավարման ժամանակ նա կադրային մսաղաց է արել՝ պաշտոնները համալրելով բացառապես յուրայիններով:

Նկատենք, որ Կատվալյանի նշանակումով Տիգրան Ավինյանի դիրքերը Երեւանում ուժեղանում են: Թիմում կարծում են, որ Ավինյանը հունիսի 7-ից հետո այլեւս չունի «ոչ լեգիտիմ» քաղաքապետի համբավ, եւ այլեւս չեն կարող նրա երեսով տալ, որ չունի ժողովրդի մեծամասնության քվեն՝ 9 տոկոսանոց քաղաքապետ է, ավելին՝ այդ պաշտոնին ընտրվել է միայն գործընկեր ուժերի եւ հատկապես Դոգի աջակցության շնորհիվ: Խորհրդարանական ընտրություններից հետո Նիկոլ Փաշինյանն էլ նրա ճակատագրին արժանացավ, եթե չասենք՝ ավելի վատ վիճակում հայտնվեց: Նա չունի մեծամասնության քվեն եւ վարչապետ է ընտրվելու «փոշիացած ձայների» եւ ԲՀԿ-ից գողացված քվեների շնորհիվ: Մենք ժամանակին գրել էինք, որ Փաշինյանը մտադիր է ազատվել Ավինյանից, եթե ընտրություններում սահմանադրական մեծամասնություն ստանա, բայց քանի որ եղավ այն, ինչ եղավ, նա ստիպված է հրաժարվել այդ մտքից: Այնպես որ, որքան էլ խորհրդարանական ընտրություններն իշխանության համար ոչ ցանկալի արդյունքներով ավարտվեցին, բայց, կարելի է ասել, Ավինյանի օգտին էին:

Ռոմիկ Մխիթարյանին կնշանակեն Շենգավիթի թաղապետ, ասում են՝ ի սկզբանե նա իր հարազատ Շենգավիթն էր ընտրել, սակայն նախկին թաղապետ Ռազմիկ Մկրտչյանն այդ ժամանակ ՔՊ-ի համար անփոխարինելի կադր էր, ուստի նրան տարան Մալաթիա: Սակայն Ռազմիկ Մկրտչյանը հայտնվեց սկանդալային ծեծկռտուքի մեջ, բանտ ընկավ ու կորցրեց պաշտոնը եւ այժմ ոչ միայն թաղապետ չէ, այլեւ անցնում է քրեական գործով եւ դուրս է եկել ՔՊ-ից: Ռ. Մխիթարյանին Մալաթիայից հեռացնելու մի պատճառ էլ կա՝ գաղտնիք չէ, որ Մալաթիան օլիգարխ Սամվել Ալեքսանյանի վոտչինան է, Ավինյանն ուզում է կառավարել Լֆիկին, նրա գործարքներն ու գործունեությունը պահել իր հսկողության տակ եւ թույլ չտալ, որ քաղաքից՝ առանց իր իմացության փող աշխատի:

Իշխանության մեր աղբյուրներից տեղեկացանք, որ Ավինյանը տուն է ճանապարհել նաեւ Արաբկիրի թաղապետ Սուրեն Վարոսյանին եւ այդ պաշտոնում պատրաստվում է նշանակել իր նախկին կադրերից Կարեն Հակոբյանին, որն իշխանափոխությունից հետո՝ մինչեւ 22 թվականը ղեկավարում էր Քանաքեռ-Զեյթունը: Կարեն Հակոբյանն այժմ ԱԺ քաղաքացիների ընդունելության եւ փաստաթղթաշրջանառության վարչության պետն է: Նա մինչ իշխանափոխությունն էլ առանձնապես հարուստ աշխատանքային փորձ չի ունեցել, պաշտոնական կենսագրության մեջ կարդում ենք. 1995-2012թթ. եղել է «Էլեն եւ ընկերներ» ՍՊԸ-ի տնօրենը, 1995-2005թթ.՝ «ՀԿԺ» ՍՊԸ-ի տնօրենը, 2004-2008թթ.՝ «Կիպրեյդ» ՍՊԸ-ի տնօրենը, իսկ 2013-2015թթ. աշխատել է «Կարեն Նավասարդյան» ԱՁ-ում՝ որպես մենեջեր: 2018-ին նշանակվել է վարչական շրջանի ղեկավար: Այսինքն՝ նրա կառավարչական հմտությունները սահմանափակվում են ԱՁ մենեջերի մակարդակով, սակայն դա չի խանգարել, որպեսզի շուրջ երեք տարի թաղապետ աշխատի:

«ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ» ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՆՆԱԽԱԴԵՊ ՈՉ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՅԼ

Ծաղկաձորի «Մուլտի Ռեստ Հաուս» հանգստյան տան աշխատակիցները բողոքի ակցիա են արել՝ իրավապահ մարմինների կողմից հյուրանոցային համալիրի գործունեության կասեցման եւ շենքը կապարակնքելու հետ կապված: Աշխատակիցները պահանջել են վերաբացել իրենց աշխատավայրը՝ հիմնավորելով, որ փակումն անմիջականորեն սպառնում է իրենց զբաղվածությանը եւ ֆինանսական եկամուտներին: «Հրապարակի» հետ կապ հաստատած աշխատակիցներից մեկն ասաց, որ իրենց համբերության բաժակը լցվել է, որ այսպես այլեւս անհնար է՝ Նիկոլ Փաշինյանը պետք է վերանայի իր որոշումները, քանի որ չպետք է 10 հազար մարդ գործազուրկ մնա: Հիշեցնենք, որ Գագիկ Ծառուկյանի ընկերություններում 10 հազար մարդ է աշխատում: Իրավապահները ոչ միայն կալանավորել են Ծառուկյանին, առգրավել նրա կենդանիներին, այլեւ փակել են նրա անվան հետ կապված բոլոր ընկերությունները, այդ թվում՝ «Մուլտի Վելնես» մարզասրահը, Օլիմպավանը, «Փարավոն» ռեստորանային համալիրը, որտեղ հարսանիքներ եւ այլ արարողություններ էին նախատեսված, «Շանգրի Լա» խաղատունը եւ այլն: Տպավորություն է, թե նպատակը որքան հնարավոր է՝ մեծ վնաս հասցնելն է սեփականատիրոջը, որը հսկայական հարկեր էր վճարում եւ մեծ թվով մարդկանց ապրուստի միջոցով էր ապահովում:

«Մեկ շաբաթ առաջ «Ժողովրդավար» Հայաստանում տեղի ունեցավ աննախադեպ ոչ ժողովրդավարական քայլ, կապարակնքվեցին «Մուլտի կոնցեռն»-ին պատկանող 70 հիմնարկներ, ինչի արդյունքում 0 հազար աշխատակից մատնվել է պարապուրդի: Այժմ մենք հայտնվել ենք շատ ծանր խնդիրների առաջ՝ կապված աշխատավարձերի հետ: Մարդիկ ամրագրումներ են արել, արդեն մեկ շաբաթ է՝ բողոքներ ենք ստանում: Ի դեպ՝ դժգոհությունները ոչ, միայն հաճախորդներից են, այլեւ՝ մեր պարտնյոր կազմակերպություններից, քանի որ մենք նաեւ աշխատում ենք միջազգային տարբեր ընկերությունների հետ, ունենք շահած մեծաքանակ տենդերներ եւ այլն: Այժմ այս ամենը ոչնչացնել քաղաքական ենթատեքստերի համար… Հյուրերին հանեցին, դուրս վռնդեցին, մարդկանց թողեցին գործազուրկ, սա անելու բան չէր, անգամ թույլ չէին տվել, որ մաքրուհիները հյուրերից հետո իրենց գործն անեին, ամառային ֆոնդը, քոթեջները լրիվ կեղտի մեջ են, ամեն ինչ թափթփված: Կառավարությունը պետք է բացի մեր հիմնարկը»,- ասաց Ծաղկաձորի «Մուլտի Ռեստ Հաուս»-ի աշխատակիցը:

Հիշեցնենք. հուլիսի 6-ի առավոտյան դիմակավորված հատուկջոկատայինները ներխուժեցին Ծառուկյանի առանձնատուն: Ավելի ուշ հայտնի դարձավ, որ քննչական գործողություններ են իրականացվում նաեւ Ծառուկյանին պատկանող տարբեր օբյեկտներում, ինչպես նաեւ՝ «Մուլտի գրուպ» կոնցեռնի կազմում ընդգրկված ընկերությունների տնօրենների բնակարաններում: Երեկոյան Ծառուկյանին ձերբակալեցին, ապա կալանավորեցին 2 ամսով: Գործարարը ու եւս մեկ անձ մեղադրվում են խարդախության օժանդակության եւ փողերի լվացման օժանդակության մեջ: Մեկ գործ էլ հարուցվել է վայրի կենդանի կամ թռչուն ապօրինի որսալու դեպքի առթիվ: Խարդախության մեղադրանքի առնչությամբ անգամ Հայաստանում Իրանի դեսպանն իր ասուլիսում խոսեց՝ ասելով, որ Իրանի քաղաքացու եւ Ծառուկյանի միջեւ քաղաքացիաիրավական հարաբերություններ են եղել: Իսկ Ծառուկյանի փաստաբանները պատմեցին, որ այդ իրանցիները դիմել են իրենց երկրի իրավապահներին, որտեղ նրանց բողոքը՝ ընդդեմ Ծառուկյանի, մերժվել է, եւ խարդախության հանցակազմ չի հայտնաբերվել:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԴՈՒՔ ՄԻԱՅՆ ԽԼԵԼ ՈՒ ԱՎԵՐԵԼ ԳԻՏԵՔ. «ՀՐԱԶԴԱՆՑԵՄԵՆՏԻ» ՈԴԻՍԱԿԱՆԸ

«Արարատցեմենտի» շուրջ զարգացումները մեզ ստիպեցին կրկին հիշել «Հրազդանցեմենտ» գործարանը: Պարզվեց՝ գործարանի ողջ գույքը՝ սարքավորումներով եւ շինություններով հանդերձ, հանվել է հրապարակային վաճառքի՝ պարտքերը մարելու համար: Աճուրդը կկայանա հուլիսի 29-ին: Ինչպես ստացվեց, որ ավելի քան 50 տարի գործող գործարանը, որն ուներ 400-600 աշխատող եւ թողարկում էր 500 եւ 400 մակնիշների ցեմենտ, սնանկացավ, ինչու իշխանությունը մատը մատին չտվեց՝ կանխելու այս պրոցեսը:

Մենք բազմիցս անդրադարձել ենք գործարանի խնդիրներին, բարձրաձայնել աշխատակիցներին չվճարված աշխատավարձերի հարցը: Իշխանության կողմից՝ քար լռություն: 2025-ին էկոնոմիկայի փոխնախարար Էդգար Զաքարյանը նշել էր, որ Հրազդանի ցեմենտի գործարանում իրավիճակը ՀՀ կառավարության վերահսկողության տակ է՝ խնդրի շուրջ հանդիպումներ եւ խորհրդակցություններ են անցկացվում, սեփականատիրոջ հետ մշակվում է «ճանապարհային քարտեզ»՝ ձեռնարկությունը ճգնաժամից դուրս բերելու համար, որը պայմանավորված է որոշ ֆինանսական խնդիրներով: Բայց կառավարությունը ոչ մի քայլ չձեռնարկեց՝ գործարանը սեփականատիրոջ ձեռքից վերցնելու, պետականացնելու կամ առողջացնելու համար, թողեց, որ գործարանը թալանեն, սնանկանա ու աճուրդի հանվի:

Իսկ մենք այսօր տեսնում ենք, թե ինչպես են աշխատող, եկամտաբեր «Արարատցեմենտը» քաղաքական հաշվեհարդարի շրջանակներում խլում Գագիկ Ծառուկյանից: Ի դեպ, այնտեղ մտադիր են ժամանակավոր կառավարիչ նշանակել էկոնոմիկայի փոխնախարար Էդգար Զաքարյանին: Նույն Զաքարյանին, որը Հրազդանի ցեմենտի գործարանի հետ կապված քննարկումներից բացի որեւէ լուծում չգտավ ու ոչինչ չձեռնարկեց:

Հիմա ՔՊ-ական պատգամավոր Լիլիթ Ստեփանյանը «սրտաճմլիկ» գրառումներ է անում Հրազդանի ցեմենտի գործարանի վերաբերյալ՝ ձեռքի հետ էլ լրատվամիջոցներին է մեղադրում, թե ինչու չեք Հրազդանի ցեմենտի գործարանին անդրադառնում. «... Երկու օր է՝ մամուլը պայթում է, թե «Արարատցեմենտի» գործը կանգնած է, բա ո՞նց կլինի, բա ո՞նց անենք, բա ցեմենտը, բա աշխատողները, բա նրանց ընտանիքները, բա էրեխեքը, բա էսպես, բա էնպես, էս իշխանությունը փակեց գործարանը, ֆլան, ֆստան: Միայն այսօր 6-7 հարցազրույց եմ նայել ընդդիմադիր դաշտից, բոլորն անխտիր անդրադարձան Արարատի գործարանին: Մե սրտացավություն, մե հոգու մորմոք: Հարգելի լրատվականներ ու լրագրողներ, մի քաղաք կա, անունը՝ Հրազդան: Ուրեմն, որ Արարատի ցեմենտի գործարանը չկար, Հրազդանի ցեմենտով ստրատեգիական նշանակության կամուրջներ էին կառուցում: 2023 թ. ապրիլից գործարանը հարկադիր պարապուրդի մեջ է անպատիվ ու անբարեխիղճ սեփականատերերի պատճառով, աշխատակիցներն արդեն 3 տարի է, ինչ աշխատավարձ չեն ստացել, ինչո՞ւ ոչ ոք այս մասին չխոսեց: Ինչ է, Հրազդանի ցեմենտի գործարանի աշխատակիցները երեխայի կամ ընտանիքի փոխարեն հավի ճո՞ւտ են պահում, թե՞ կատվի ձագ: Այսքան երկակի, այսքան կույր ու անարդար, այսքան սուբյեկտիվ ո՞նց կարող է մամուլը լինել: Թե՞ վախենում եք՝ անդրադարձի դեպքում մարդկանց անուններ հիշատակվեն, որոնք ձեր քաղաքական հայրերն են ու հովանավորները: Վախենում եք դուրս գալ ձեր հետքի վրա՞: Ի դեպ, «Արարատցեմենտ» գործարանը ողջ թափով այսօրվանից աշխատում է, դեռ կսպասեմ, տեսնեմ՝ Հրազդանի մասին ով ծպտուն կհանի»:

Ուրեմն, ի գիտություն մամուլ, կայքեր չկարդացող եւ ճամարտակող Լիլիթ Ստեփանյանի՝ միայն «Հրապարակը» տասնյակից ավելի հրապարակումներ ունի Հրազդանի ցեմենտի գործարանի եւ աշխատակիցների չստացած աշխատավարձերի մասին: Բայց մեծ-մեծ փրթելու փոխարեն՝ այդ մտահոգ զայրույթդ քո իսկ իշխանությանն ուղղիր, որը բացի ավերելուց, ոչ մի բանի ունակ չէ: Մեդիան կանդրադառնա, թե ոչ՝ փակվող գործարանների խնդրին, դրանից մեծ բան չի փոխվում, որովհետեւ պետության ղեկին, պատասխանատու ոլորտների գլխին ձեր իշխանության ապաշնորհ ներկայացուցիչներն են նստած, որոնք ոչնչի ընդունակ չեն՝ ո՛չ ճգնաժամային կառավարման, ո՛չ սեփականատերերին աջակցելու, ո՛չ ՀՀ քաղաքացի հանդիսացող աշխատակիցների հարցերը լուծելու:

Ձեր իշխանությունը ոչ միայն քանդելու, այլեւ խլելու գործում է վարպետ՝ ՀԷՑ-ը խլեցիք Սամվել Կարապետյանի ձեռքից, քաղաքական հաշվեհարդար եք տեսնում Ծառուկյանի նկատմամբ, նրան պատկանող գործարաններն ու օբյեկտներն եք կապարակնքել: Իսկ ինչո՞ւ Հրազդանի ցեմենտի գործարանից իշխանությունը «ձեռքերը լվաց», ու գործարանը գնաց սնանկացման: ՀԷՑ-ը եւ «Արարատցեմենտը», «Հրազդանցեմենտ» գործարանի նման, սեփականատերեր ունեին, ինչո՞ւ խլեցիք ՀԷՑ-ն ու «Արարատցեմենտը», իսկ «Հրազդանցեմենտի» դեպքում ասում եք՝ պետությունն իրավական հիմքեր չունի՝ միջամտելու:

Իսկ «Հրազդանցեմենտ» գործարանը 2001 թվականին սեփականաշնորհվել է «Միկա Արմենիա» ընկերության նախագահ Միխայիլ Բաղդասարովի կողմից, վերանվանվել «Միկացեմենտ» ՓԲԸ: 2016-ին կուտակված պարտքերի պատճառով ձեռնարկությունը փոխանցվել է ՎՏԲ-Հայաստան բանկին, որը դարձել է դրա լիիրավ սեփականատերը: 2017-ի վերջին գործարանը ձեռք է բերել «Ջի Էմ հոլդինգ»-ի հիմնադրած «Հրազդանցեմենտ քորփորեյշն» ընկերությունը, որը պատկանում է երկու գործարարի՝ Վիտալի Գրիգորյանցին (55%) եւ Արսեն Միքայելյանին (45%): Վիտալի Գրիգորյանցը ռուս-ուկրաինական գործարար է, Ամիոբանկ վերանվանված «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի հիմնական բաժնետերն էր (95%): Արսեն Միքայելյանը նույն բանկի վարչության նախագահն է եւ «Վիտալի Գրիգորյանց» բարեգործական հիմնադրամի տնօրենը: «Հրազդանցեմենտ քորփորեյշն» ՍՊԸ-ի սնանկացման գործընթաց սկսելու մասին դատական որոշումը կայացվել է 2022թ. մայիսի 4-ին:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ Ո՞Ր ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՅԼԵՎՍ ՉԻ ԽՈՍՎՈՒՄ

Ընտրական էյֆորիան արագ հօդս ցնդեց: Իսկ այն, ինչ տեսնում ենք մեր շուրջը՝ հունիսի 7-ի խորհրդարանական ընտրություններից մեկ ամիս անց, ամենեւին էլ ՔՊ-ի խոստացած դրախտը չէ: Թոշակառուները շատ արագ սովորեցին 10 հազարով ավելացած թոշակ ստանալու «երջանկությանը» եւ հայտնաբերեցին, որ իրենց կյանքում ոչինչ չի փոխվել, իսկ գներն ավելի կատաղի են սկսել աճել: Ապրիլին կենսաթոշակների բարձրացման ֆոնին գների ընդհանուր մակարդակը չեզոքացրել է այդ 10 հազարի արժեքը: Ապրիլին՝ նախորդ տարվա ապրիլի համեմատ, պարենային ապրանքները թանկացել էին 9.5%-ով: Մեր աչքի առաջ հօդս է ցնդում նաեւ Փաշինյանի «տժվժիկը»՝ առողջության համընդհանուր ապահովագրությունը: Անվճար ծառայությունները կամաց փակվում են, բուժհաստատությունները հանգիստ օգտվում են համավճար վերցնելու իրենց իրավունքից, եւ այս հարցում ուղղակի ամենաթողություն է՝ ով ինչքան ուզում է, համավճար է գանձում պացիենտներից:

Քարոզարշավի ընթացքում ներդրումների, տարեկան նոր՝ 25 հազար աշխատատեղի, գների կայունացման, բիզնես միջավայրի բարելավման մասին էին պատմում: Բայց այսօր այդ ամենը հետին պլան է մղվել, իսկ հանրային օրակարգում այլ թեմաներ են՝ գետնին տապալված կամ սպանված առյուծներ, իրավական անարխիա, դաշտերում չորացող բերք, գործազրկության տագնապ, հարուստներին պատժելու հրամայական:

«Մարդիկ հիմա վարկեր պիտի մուծեն: Ամիսը լրանում է: Որտեղի՞ց պիտի մուծենք»,- ասում էր «Արարատցեմենտի» աշխատակիցներից մեկը՝ գործարանի հարկադիր պարապուրդի օրերին: ԲՀԿ-ականներն էլ հայտարարում էին, որ Ծառուկյանի բիզնեսների նկատմամբ իրավապահ գործողությունների հետեւանքով հարկադիր պարապուրդի է մատնվել մոտ 10 հազար մարդ: Նախօրեին հայտարարվեց, որ «Արարատցեմենտի» աշխատանքը վերականգնվել է, որ աշխատողների իրավունքները կպահպանվեն: Բայց տեսնելով, թե ինչ է կատարվում Ծառուկյանի շուրջ, աշխատողները վաղվա հանդեպ հույս չունեն:

Նույնքան հակասական է բիզնես միջավայրի պատկերը: Քարոզարշավի ընթացքում իշխանությունը մեծ-մեծ խոսում էր ներդրումների խթանման, ձեռնարկատիրության զարգացման եւ բարենպաստ գործարար միջավայր ստեղծելու մասին: «Ներդրումը ներդրում է բերում», «Մենք խոսում ենք ներդրումային նոր էկոհամակարգի ձեւավորման մասին»,- ճամարտակում էր Փաշինյանը, բայց այսօր մարդիկ շունչները պահած հետեւում են, թե առաջիկայում որ գործարարից ինչ է խլվելու, ով է պատժվելու, ով է ունեզրկվելու, եւ արդյո՞ք բիզնեսն այսօր իրեն զգում է այդ էկոհամակարգի մասնակից, ու կարելի է խոսել ներդրումային միջավայրի նկատմամբ վստահության մասին:

«Եթե դու ուրիշի բիզնեսը քաղաքական դրդապատճառներով խլում ես, մեկից՝ ՀԷՑ-ը, մյուսից՝ «Արարատցեմենտ»-ը, ձեռնարկություններ, մարզասրահներ ես փակում, բնականաբար, այդ երկրում ներդրումներ չեն լինում»,- համոզված է քաղտեխնոլոգ **Արմեն Բադալյանը**: Ըստ նրա, խոստումները չէին կարող համապատասխանել այսօրվա իրավիճակին, երբ տասնյակ բեռնատարներ օրերով կանգնած են սահմանին, արագ փչացող մրգերի եւ բանջարեղենի զգալի մասը դեն է նետվում, ֆինանսական ֆիասկոյի ռիսկի առաջ՝ գյուղացին լքում է հողը: Արդեն արտադրված բերքը շուկա հասցնելն է երազանք դարձել, ծիրանի, կեռասի, ծաղկի, այլ գյուղարտադրանքի ճանապարհը դեպի Ռուսաստան մնում է փակ: «Միայն դրանց առաջ չի փակ, գյուղատնտեսական բոլոր մթերքների, կորիզապտուղ բույսերի, ձկնեղենի, ջերմուկի, կոնյակի մեծ մասի ու փակ էլ մնալու է: Իշխող քաղաքական ուժին պետք էր ամեն գնով իշխանությունը պահել, իսկ դրանից հետո ինչ խոստում որ տրվել է, ջրվեց: Հիմա նա այլ քաղաքականություն է իրականացնում, իսկ խոստումների մասին կվերհիշեն ՏԻՄ ընտրությունների ժամանակ»,- ասում է քաղտեխնոլոգը:

Բայց Փաշինյանը խոստանում է, որ Մոսկվայի հետ առաջացած խնդիրները կարգավորելու է, ռուսական իշխանություններն էլ հայերի մասին լավ-լավ բաներ են ասում՝ օրինակ, Զախարովայի շուրթերով, եւ ի՞նչ, ոչինչ չի՞ փոխվելու: «Ուշադրություն պետք է դարձնել ոչ թե խոսքերին, այլ՝ գործողություններին: Տնտեսական սահմանափակումները շարունակվում են: Հայաստանում եվրոպական կառույցների դիրքերն ամրապնդվում են, այսօր էլ Կայա Կալլասն ասաց, որ Հայաստանում ԵՄ նոր առաքելություն է հիմնվում: Մի մոռացեք, որ մայիսի 30-ի որոշմամբ ԵԱՏՄ-ն Հայաստանին 6 ամիս ժամանակ է տվել, եւ եթե այս նույն իրավիճակը մնա, դեկտեմբերի 30-ին Հայաստանին ԵԱՏՄ-ից դուրս կշպրտեն, կկասեցնեն մեր անդամությունը, իսկ դա կբերի ընդհանուր արտաքին առեւտրի կոլապսի: Էլ չեմ ասում, որ գազի գինը բարձրանալու է, եւ մարդիկ, ովքեր ընտրեցին ՔՊ-ին, պետք է իմանան, որ այն մատնաքաշը, որը նրանք հիմա գնում են 200-220 դրամով, կարող է դառնալ 600-700 դրամ: Ու կապ չունի, թե ինչ է խոսում Ուրսուլա ֆոն դեր Լայենը: ԵՄ աջակցությունը 52 մլն եվրո է: Իսկ Հայաստանը Ռուսաստանից՝ այնտեղ ուղարկվող ապրանքներով եւ աշխատանքային միգրանտների միջոցով ստանում էր տարեկան 7 մլրդ դոլարի եկամուտ: Եթե ԵՄ-ն տարեկան այդքան մեզ տա, ապա կկոմպենսացնի այս խնդիրները, բայց նման բան չի լինի: Իսկ մեզ հենց էդքան է պետք»,- ասում է Արմեն Բադալյանը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՄԹԵՐՔ

ԱՄԲՈՂՋ ՁՄԵՌ ԸՆՏԱՆԻՔՍ ՊԱՀՈՒՄ ԵՄ ԱՅՍ 3 ԱՄՍՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ, ՀԻՄԱ ԾԱԽՍԵՐՆ ԷԼ ՉԵՄ ՀԱՆՈՒՄ

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

Ռուսաստանը Փաշինյանի հակառուսական գործողություններին ի պատասխան կողպել է ռուսական շուկայի դռները հայ արտադրողների առաջ: Ու չնայած Փաշինյանն ու իր արբանյակները հայտարարում են, որ ռուսական շուկայի այլընտրանքը գտել են՝ հայ արտադրողների առաջ բացվել է եվրոպական շուկան, եւ ապրանքը կարող են տանել ԵՄ երկրներ, սակայն հայ գյուղացիները, ջերմոցատերերը եւ արտադրողները հայտնվել են անելանելի վիճակում:

Ռուսաստանը մայիսի 22-ից կասեցրել է ծաղիկների ներմուծումը Հայաստանից: Ըստ պաշտոնական բացատրության՝ պատճառը հայտնաբերված վնասատուներն են: Ռուս մասնագետները Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետ դեռ մայիսին ջերմոցային տնտեսություններում տեսչական ստուգումներ էին իրականացրել, եւ իբր խախտումներ էին հայտնաբերվել, ինչի հետեւանքով ծաղկի հայաստանյան շուկայում լճացում է. ծաղկի արտադրությամբ զբաղվողներն իրացման լուրջ խնդիրների առջեւ են կանգնել: Ծաղիկների մուտքը Ռուսաստան արգելվել էր նաեւ անցյալ տարվա հուլիսին: Ծաղկավաճառներն ու ջերմոցատերերը բողոքի ակցիաներ էին սկսել Երեւանում, տեղական շուկան կոլապսի մեջ էր: Սննդի տեսչությունն այն ժամանակ խնդրել էր ռուսական կողմին՝ կրկին ստուգել հայկական ջերմոցների սանիտարական պայմանները: Տեսազանգերով ռուսաստանցի էքսպերտները նայել էին՝ ծաղիկների վրա միջատներ կմն արդյոք, թե՝ ոչ, եւ հարցը կարգավորվել էր: Սակայն այժմ որեւէ ընկերություն ծաղիկ չի կարողանում արտահանել ՌԴ: Օրինակ՝ 2025-ին Հայաստանից արտահանվել էր շուրջ 34 միլիոն դոլարի ծաղիկ: Բայց ծաղիկը դեռ ամենը չէ:

«Ռոսսելխոզնադզորի» նախագահ Սերգեյ Դանկվերտը մայիսի 22-ին հայտարարել էր, որ «խնդիրներ են ծագել» նաեւ հայկական մրգերի եւ բանջարեղենի հետ կապված, եւ հայկական պտուղ-բանջարեղենի արտահանումը նույնպես արգելվեց: Հիշեցնենք, որ անցյալ տարի էլ հայկական ծիրանի մոտ 80 տոննա բերքն էր մնացել Լարսի անցակետում: Գյուղատնտեսները բողոքի ակցիաներ էին անում սահմանին: Այս տարի ռուսաստանցի մասնագետներն անձամբ էին ժամանել Հայաստան, որ ստուգումներ անեին տեղի մի քանի ձկնաբուծարաններում եւ ջերմոցներում: Նրանք դեռ Ռուսաստան չէին վերադարձել, երբ մայիսի 28-ին «Ռոսսելխոզնադզորը» նոր հայտարարություն տարածեց, թե կարգելվի նաեւ թարմ լոլիկի, կանաչ պղպեղի, վարունգի, կանաչեղենի ու ելակի ներմուծումը: Հայաստանից ամեն տարի ավելի քան հարյուր միլիոն դոլարի միրգ ու բանջարեղեն են արտահանվել ՌԴ:

Մայիսի 22-ին «Ռոսպոտրեբնադզորն» արգելել է նաեւ «Ձերմուկ» հանքային ջրի ներմուծումն ու վաճառքը Ռուսաստանում: Պատճառաբանությունը տեխնիկական է՝ հայտնաբերել են «բիկարբոնատ իոնների, քլորիդների եւ սուլֆատների չափազանց մեծ քանակ»: Նկատենք, որ դեռ տարեսկզբից միայն 38,4 միլիոն շշի վաճառք էր կասեցվել: Հայաստանի սննդի անվտանգության տեսչական մարմինը «Ձերմուկի» մայր գործարանում բոլորովին վերջերս ստուգումներ է արել, արտադրանքի մեջ տեղացի փորձագետները չեն հայտնաբերել ռուսական կողմի նշած ցուցանիշներով խախտումներ: Ռուսաստան արտահանվում է տարեկան մոտ 15 միլիոն լիտր ջերմուկ:

Մայիսի 23-ին կասեցվել է նաեւ Հայաստանում արտադրվող որոշ ալկոհոլային խմիչքների մուտքը Ռուսաստան:

«Հրապարակը» նախ զրուցեց Արմավիր քաղաքում գյուղատնտեսությամբ զբաղվող **Գրիգոր Բեկնազարյանի** հետ: Մեր զրուցակիցը պատմեց, որ վարունգ եւ լոլիկ է աճեցնում, ամեն տարի կարողանում է այդ գումարներով ընտանիքը պահել, սակայն այս տարի, երբ ռուսական շուկան Հայաստանի համար անհասանելի է դարձել, անգամ սերմերի, ոռոգման ջրի եւ իր աշխատողների գումարը չի կարողանում հայթայթել, քանի որ զգալիորեն բանջարեղենի արժեքը նվազել է: «Նախորդ տարի 200-300 դրամով էինք վաճառում, էս տարի Մեյմանդարի շուկայում 70 դրամով ենք վաճառում: Արդեն տասը տարուց ավելի ամբողջ ձմեռ ընտանիքս պահում եմ ամռան երեք ամիսների աշխատանքով՝ բերքի եկամտով, էս տարի անգամ ծախսերը չեմ կարողանում հանել»,- ասում է մեր զրուցակիցը:

Զրուցեցինք նաեւ տարբեր ջերմոցային տնտեսությունների ղեկավարների հետ: Ծիրակի մարզում գործող **«Վարդերի աշխարհ» ջերմոցային տնտեսությունից** «Հրապարակի» հետ զրույցում ասացին, որ սարսափելի վիճակում են հայտնվել, չեն կարողանում որեւէ ուղղությամբ ծաղիկ արտահանել: Հարցին՝ չե՞ք կարողանում ծաղիկը եվրոպական շուկա արտահանել, մեր զրուցակիցն ասաց. «Ոչ մի ուղղությամբ չենք կարողանում ծաղիկն արտահանել, ահավոր վիճակում ենք: Ինչ մնում է ծաղիկը Եվրոպա տանելուն, կատարյալ սուտ է՝ նման բան չկա: Տեղական շուկայում էլ սարսափելի ցածր գներով ենք վաճառում առաջվա թանկ վարդերը»:

«Պիոն» ջերմոցային տնտեսության ղեկավար **Անահիտ Հովհաննիսյանն** էլ մեզ հետ զրույցում հարցին հարցով պատասխանեց. «Հիմա ո՞վ է կարողանում ծաղիկ արտահանել, որ մենք կարողանանք»: Իսկ ինչպե՞ս եք վաճառում ծաղիկը, մեր զրուցակիցն ասաց, որ այժմ աշխատում են ծաղիկը Եվրոպա տանելու ուղղությամբ, կստացվի, թե ոչ, Աստված գիտի: Իսկ թե որ եվրոպական երկիր են ցանկանում արտահանել, Հովհաննիսյանն ասաց՝ գաղտնիք է:

«Դրիմ ռոզ» ջերմոցային տնտեսության ղեկավար **Ռուբեն Սիմոնյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ այս ամենը ռուսական կողմից հատուկ է արվում՝ Հայաստանում խժդժություններ հրահրելու համար. «Չենք տրվելու ռուսական սադրանքին, պետք եղած դեպքում կթափենք զիբիլը մեր ապրանքը, բայց ռուսին չենք խնդրի ոչ մի բան: Ու ինձ նման մտածում են իմ շրջապատի բոլոր ջերմոցատերերը»: Ինչպե՞ս եք կարողանում արտահանել ծաղիկը: «Կոնկրետ ես արտահանել եմ Իտալիա, իհարկե, գինն էն չի, բայց ոչինչ»,- ասաց մեր զրուցակիցը եւ հրաժարվեց ասել, թե քանի ծաղիկ է կարողացել արտահանել Իտալիա, ինչ եկամուտ է ստացել: Պնդեց, որ այդ տեղեկությունները կոմերցիոն գաղտնիք են:

150 ԱՇԽԱՏԱԿԻՑ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՉԻ ՍՏԱՑԵԼ, ԱՆՈՐՈՇ ՎԻՃԱԿ Է

Շաբաթ օրը «Մուլտի Վելնես» սպորտային համալիրի դիմաց աշխատակիցներն ու մարզվողները բողոքի ակցիա էին անում՝ դժգոհելով համալիրի փակման կապակցությամբ: Նրանք հայտարարում էին, որ պետությունը խախտում է աշխատողների եւ մարզվողների իրավունքները: «Մարդիկ հարկադիր պարապուրդի են մատնվել: Մեր սեփականատեր Գագիկ Ծառուկյանը բազմաթիվ աշխատատեղեր է ստեղծում, իսկ պետությունը հարկադրաբար մարդկանց զրկում է աշխատանքից: Մեր աշխատանքային թիմում կային նաեւ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիներ, որոնց մեծամասնությունը վարձով է ապրում. հիմա նրանք օրվա հացի խնդիր ունեն: Մարդիկ կան, որ ունեն վարկեր, սակայն ոչ մեկը դրա մասին չի մտածում»,- ասել էր «Մուլտի Վելնես»-ի աշխատակիցներից մեկը:

«Մուլտի Վելնես» համալիրի գլխավոր տնօրեն **Արման Փիրոյանը** «Հրապարակի» հետ զրույցում հավելեց, որ օրեցօր խնդիրները կուտակվում են: Նրա խոսքով՝ ներսում սարքավորումները միացված են եւ մնացել են հսկողությունից դուրս: «Միջնորդություն եմ ներկայացրել քննչական մարմնին եւ սպասում եմ պատասխանի, քանի որ հրատապ լուծում է հարկավոր: Այս պահին բոլոր մուտքերը կապարակնքված են, ես կամ որեւէ այլ աշխատակից դեռ չենք հարցաքննվել: Մեզ մոտ համալիր ստուգումը սկսել էին, եւ ամեն ինչ նորմալ գնում էր: Մեզնից ինչ փաստաթղթեր ուզել են, ամբողջը ներկայացրել ենք: Տարել են համակարգիչներ, սերվերներ, նաեւ՝ իմ անձնական հեռախոսը: Գույքը տանելուց 2 օր անց հայտարարում են, թե հարկեր են թաքցվել, սակայն այդքան օրում նրանք չէին կարող ստուգել»,- ասում է մեր զրուցակիցը:

- Իսկ չկա՞ որեւէ տեղաշարժ, նորություն, թե երբ կբացվի «Մուլտի Վելնես»-ը:

- Դեռ ոչ մի տեղաշարժ, սպասում ենք, որ իրավապահները, ՊԵԿ-ի աշխատողները 7-օրյա ժամկետում հստակ պատասխաններ կտան, եւ մեր աշխատանքը կշարունակվի: Ես կարող եմ մի բան հստակ ասել. «Մուլտի Վելնես»-ի աշխատանքն ամեն կերպ տուժել է՝ թե՛ աշխատակիցներն են տուժել եւ թե՛ հաճախորդները, մարզվողները: Բոլորը դժգոհ են, մարդիկ վճարել են եւ չեն կարողանում այժմ օգտվել: Ամառային հանգիստը շուտով կավարտվի, բայց մարդիկ ոչ մի բանից գրեթե չեն հասցրել օգտվել:

- Շատ են այն հաճախորդները, որոնք վճարել են ամիսների, նույնիսկ տարիների համար, աբոնեմենտ են ձեռք բերել, սակայն այժմ չեն կարողանում օգտվել ծառայություններից:

- Ունենք 4 հազար հաճախորդ, որից մոտ 2 հազարը վճարել է հետագա ամիսների համար, ուղղակի քանի որ համակարգիչները վերցրել են մեզնից, հիմա չեմ կարողանա հստակ թվեր ասել, սակայն նման հաճախորդների թիվը գերազանցում է 2 հազարը: Ասեմ ավելին՝ մենք նաեւ ունենք ամառային դպրոց՝ հաշմանդամ երեխաների համար: Մարդիկ իրենց երեխաներին բերում են մեզ մոտ, փաթեթներ են վերցնում, եւ մասնագետներն աշխատում են տարբեր խնդիրներ ունեցող երեխաների հետ, երեխաները նաեւ կրթություն են մեզ մոտ ստանում: Էլ չասեմ, որ 150 աշխատակից աշխատավարձ չի ստացել, անորոշ վիճակ է, մարդիկ աշխատանքի խնդիր ունեն:

- Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այն հանգամանքին, որ Գագիկ Ծառուկյանի դեմ հարուցված քրեական վարույթների շրջանակում փակել են ԲՀԿ առաջնորդին պատկանող բոլոր կառույցները, գործարանները եւ այլն:

- Չի կարելի բիզնեսը խառնել քաղաքականությանը: Յուրաքանչյուր բիզնես ունի իր կառավարիչը, ես դա շատ սխալ եմ համարում: Մենք մշտապես մեր հարկերը վճարել ենք, սակայն սկսել են հարկերից խոսել, սոցցանցերում աչքովս ինչ-որ հրապարակումներ ընկան, թվային անճշտությունները ներկայացնում են որպես իրականություն, սակայն մեր հաշվապահները կարող են հակառակն ապացուցել:

- Ասում եք, որ 7-օրյա ժամկետ կա՝ եթե այդ ժամկետում խնդիրը չլուծվի, ի՞նչ քայլեր եք պատրաստվում ձեռնարկել:

- Դժվարանում եմ հստակ ասել, եթե հարցին չտան լուծում: Աշխատողներն ինձնից են աշխատավարձ պահանջում, մարդիկ իրենց հասանելիք գումարներն են պահանջում, բայց ես չգիտեմ ինչ ասեմ: Աշխատակիցներն իրենք պետք է որոշեն իրենց հետագա անելիքները, ես նրանց փոխարեն չեմ կարող որոշել, գուցե որոշեն համապատասխան կառույցների դիմաց ակցիաներ անել, գուցե ոչինչ էլ չանեն…. մարդիկ ապրելու, ընտանիք պահելու խնդիր ունեն, աշխատել են, բայց աշխատավարձ չեն ստացել:

- Իսկ հաճախորդներից դժգոհություններ ստացե՞լ եք:

- Միանշանակ՝ ստացել ենք, հաճախորդներն ասում են՝ եթե չեք ասում, թե երբ է բացվելու կենտրոնը, ասեք, որ իմանանք, թե ում դիմենք՝ գումարները ստանալու համար: Մի խոսքով՝ սարսափելի վատ վիճակ է, անորոշ է ամեն ինչ:

ԿԱՐԾԻՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԶՈՀ ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Փաշինյանական ռեժիմը համաշխարհային ռեկորդ սահմանեց, ընդ որում, միանգամից՝ երկու: Հայաստանում կա քաղաքական հաշվեհարդարի զոհ առյուծ, եւ կան քաղաքական բանտարկյալ առյուծներ ու, հավանաբար, այլ կենդանիներ եւս: Նման բան համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ չի եղել, որոնեք համացանցում եւ ոչ մի նման հիշատակում չեք գտնի, որ կենդանին քաղաքական պատվերով սպանվի կամ քաղաքական պատվերի արդյունքում հայտնվի կալանավայրում:

Ինչո՞ւ են սպանված առյուծը կամ գազանանոցում հայտնված առյուծները եւ այլ կենդանիներ քաղաքական հաշվեհարդարի զոհ, կարծում եմ՝ բացատրելու կարիք չկա: Հայաստանում կան բազմաթիվ մարդիկ, ովքեր ունեն կենդանիների հավաքածուներ, բայց հաշվեհարդարի զոհ դարձան միայն Գագիկ Ծառուկյանի կենդանիները, բացառապես այն պատճառով, որ նա ընդդիմադիր է, պայքարում է Հայաստանը Փաշինյանից եւ նրա ստեղծած հակամարդկային ռեժիմից ազատագրելու համար: Առյուծի սպանությունը բացատրեցին իբրեւ թե նրա ունեցած ուղեկցող հիվանդություններով, դա նույնն է, որ ինչ-որ մարդու սպանեն, հետո ասեն, թե պարզվեց, որ այդ մարդը շաքարային դիաբետ ուներ եւ ճնշում, այսպես թե այնպես՝ մի օր մեռնելու էր:

Այդ կենդանիները վայրի չեն, պարզ է, չէ՞, որ Ծառուկյանը ո՛չ առյուծներին, ո՛չ կոկորդիլոսներին, ո՛չ էլ այլ կենդանիների վայրի բնությունից չի որսացել: Փաշինյանն էլ նրանց առգրավելով նրանց չի ազատել՝ վայրի բնություն բաց չի թողել, այլ կալանավորել է՝ ուղարկելով գազանանոց: Գազանանոցի պայմանները, համեմատած այն պայմաններին, որում այդ կենդանիներն ապրում էին Ծառուկյանին պատկանող տարածքում, կարելի է համարել պատիժ, պատժախուց, որովհետեւ թե՛ կերակրման, թե՛ ունեցած ազատ տարածքի առումով դրանք անհամեմատելի են:

Ինչո՞ւ այլ մարդկանց կողմից պահվող վայրի կենդանիներին չեն կալանավորում, որովհետեւ չեն իմանալու, թե ինչ անեն տասնյակ առյուծների, վագրերի կամ արջերի հետ: Դրանց, իհարկե, կարելի է քնեցնել՝ սատկացնել, այնպես, ինչպես վարվեցին Ծառուկյանին պատկանող առյուծի հետ, բայց դրա կարիքը դեռ չկա, քանի դեռ այդ կենդանիների սեփականատերերն իշխանություններ են, նոր մտածեն կենդանիների մասին: Բացատրենք, թե ինչու:

Աշխարհի բազմաթիվ երկրների կրկեսներում կենդանիների օգտագործումը՝ վարժեցված կենդանիներով համարների ցուցադրումն արգելված է, այդ թվում՝ եւ Հայաստանում: Համարվում է, որ կենդանուն վարժեցնելու ժամանակ նա ենթարկվում է ֆիզիկական եւ հոգեբանական բռնության, վարժեցնողի հրամանը կատարելու համար նրան կարող են հարվածել կամ սովի մատնել եւ կերակրել միայն հրամանը կատարելու դեպքում. թռչում են օղակի միջով, եւ շաքար են դնում բերանը, դրանով քաղցրացնելով արժանապատվության կորստից առաջացող դառնությունը: Բայց բազմաթիվ կենդանիներ այդպես էլ չեն հնազանդվում՝ դառնալով հաշմանդամ: Կան կենդանիներ, օրինակ՝ գայլը, որ ընդհանրապես չի ենթարկվում վարժեցման:

Հիմա տեսեք, թե Փաշինյանը որքան վարժեցրած երկոտանի ոչխարներ, կապիկներ, սողուններ, շնագայլեր՝ շակալներ եւ այլ կենդանանմաններ ունի իր շրջապատում: Այդ երկոտանիները ծառայում են միայն նրա համար, որ Փաշինյանը նրանց վարժեցրել է՝ համոզելով, որ եթե իր հրամանով չթռչեն, չցատկոտեն, չվազեն, ապա սոված կմնան եւ կսատկեն, իսկ եթե հրամանները հնազանդորեն կատարեն, ինքը շաքար կդնի բերանները, փող կտա, եւ նրանք կապրեն ապահով ու երջանիկ: Ու հարյուրավորները կամ հազարավորները հնազանդորեն ծառայում են նրան, վայելում իրենց բերանը դրված քաղցր շաքարը: Փաշինյանն ուզում է այդպես վարժեցնել ու հնազանդեցնել նաեւ ամբողջ հասարակությանը՝ խելոք մնացեք, թե չէ կկալանավորվեք, կունեզրկվեք, սովի կմատնվեք, հացին կակա կասեք: Բարեբախտաբար, հասարակությունն ակտիվորեն դիմադրում է՝ ազատությունը եւ արժանապատվությունը գերադասելով ստրկությունից եւ երկոտանի անասունի գազանանոցային կյանքից:

Ավետիս
ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ՝ ՈՒՂԵՎԱԿՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔ

Հարցը, որի մասին կուզենայի խոսել այսօր, գնալով սրվում է: Լավ կլիներ՝ Նիկոլը արձակուրդում չլիներ ու մեզ հետ քննարկեր այն, բայց որ արձակուրդում է, ի՞նչ կարող ենք անել: Հարցը չի սպասում՝ գնալով սրվում է, դառնում է չարիք: Խոսքն ուղեփակոցների բիզնեսի մասին է: Չգիտեմ՝ ով է, ում ծանոթն է, բայց սկսել է այդ գործով զբաղվել՝ ուղեփակոցներ դնել բակերի մուտքին, ասել է թե՝ սահմանափակել մեր քաղաքացիների ազատ տեղաշարժը հանրային տարածքներում: Ծարավ աղբյուր թաղամասում, օրինակ, մի ամբողջ փողոց են փակել՝ երկու կողմից: Ով է թույլ տվել՝ չգիտեմ: Ինչ-որ ՔՊ-ական «շիշկաներ» են ապրում այդ կողմերում, ենթադրում եմ՝ Ավինյանի հետ էլ լավ են: Այլապես՝ չէին հանդգնի: Փաշինյանն իմանա՝ սրանց օդերով կհանի: Բայց նա էլ հակառակի պես արձակուրդ գնաց: Ո՞ւմ հետ քննարկեմ հարցը, Ավինյանի՞… Եվ հետո՝ հո միայն Ծարավ աղբյուրը չէ՞: Երեւանում համարյա բակ չի մնացել, որ իր ուղեփակոցը չունենա: Պարզ է, չէ՞, որ տղերքը կարգին բիզնես են դրել՝ Ավինյանին էլ «օրթախ» դարձրել:

Ի դեպ, կարգին փողեր են «ֆռռում» այստեղ: Ոչ մի տեղ օրինական գովազդ չես տեսնի: Տպավորություն է, որ «գողեգող» են գործում: Սկզբում «նստում են» մեկ-երկու բնակչի ականջին՝ էս ի՞նչ վիճակ է ձեր բակում, ախպեր, ոնց որ «պռախադնոյ դվոռ» լինի, վաղը, մյուս օրը այնքան ավտո է լցվելու բակ, որ ձեր մեքենաներին տեղ չլինի կանգնելու: Դավայ, հարեւաններով փող «քցվեք», «շլագբաում» դնենք, պրծեք էդ պրոբլեմից: Փողն էլ քիչ չէ, 20-25 հազար: Իսկ եթե «շլագբաումը» «ֆեյսկոնտրոլով» է կամ ավտոյի համարները ճանաչող, հնարավոր է՝ 30-35 հազար: Այս երկու «ահաբեկված» բնակիչներն էլ ընկնում են դռնեդուռ, իրենց հարեւանների խելքն ուտում, փողը հավաքում, տալիս «շլագբաում» դնողին՝ առանց նույնիսկ սրա ով լինելը հարցնելու:

Այնպես էլ չէ, որ բակի բոլոր բնակիչները միահամուռ համաձայնում են առաջարկին: Մարդ կա՝ ասում է. ես ավտո չունեմ, ինչո՞ւ տամ: Մյուսը, թե՝ ես «գարաժ» ունեմ, ով չունի, թող նա մտածի: Երրորդը հակաճառում է՝ ես ուրիշ բանուգործ չունեմ, հա՛, պիտի ամեն գնացող-եկողի համար «շլագբաում» բացեմ: Այսուհանդերձ, քիչ չեն նաեւ շահագրգիռ բնակիչները, որոնք հազար ու մի պատճառ են բերում, թե ինչու պետք է «շլագբաում» ունենալ… Երեխաները խաղալու տեղ չունեն, ավտոներն են խազում, վնասում, խմած տաքսիստներ են մտնում բակ, գազ են տալիս՝ «զադնի-պերեդնի», էն օրն էլ Վաղոյի ավտոյի հայելիներն են տարել… Չէ, «շլագբաում պետք է, մի քանի հատ էլ տեսախցիկ է պետք դնել, որ իմանանք՝ քանի օտար ավտո մտավ բակ, դուրս եկավ»:

Անձամբ ես ավտո ունեմ, բայց դեմ եմ «շլագբաումի» գաղափարին: Մի քանի անգամ ականջիս «նստողներին» ասել եմ՝ ես սկզբունքորեն դեմ եմ մարդու ճանապարհի փակելուն, դա լավ տոն չէ: Նրանք, ում առաջ դուք ճանապարհ եք փակում, նույնպես ՀՀ քաղաքացի են: Ենթադրենք՝ մարդը աշխատանքային ժամին գործով եկել է, իսկ մեքենան կանգնեցնելու տեղ չկա, ի՞նչ անի… Բակն էլ այդ պահին ազատ է…

«Շլագբաումի» կողմնակից հարեւանս ինձ հակաճառում է;

- Բա կողքի «վիսոտնու» բնակիչների՞ն ինչպես արգելենք մեր շենքի տակ ավտո կանգնեցնել:

- Ծեծեք, ախպեր, մի թողեք… Իրենք էլ ձեզ չեն թողնում, չէ՞: Եկեք էս գիշեր դրանց ավտոների ակները ծակենք:

- Յա՛մա՛…

- Ի՞նչ: Բա որ «շլագբաում» դրեցիր, իրենք էլ «Կամազով» բրթեն-ջարդեն, լմվ կլինի: «Շլագբաումով» պրոբլեմը չի լուծվում: Դա ընդամենը բիզնես է, որ որոշ մարդկանց փող է բերում: Պրոբլեմն իշխանությունների տակ է: Կոնկրետ ում տակ՝ ես չգիտեմ:

Դեռ Տարոն Մարգարյանի ժամանակներից դիմումներ եմ գրել Երեւանի քաղաքապետարան, որ ինձ մի «գարաժի» տեղ տան: Հազար ու մի պատճառներ եմ բերել, որ դա անհրաժեշտություն է ինձ համար: Տարոն Մարգարյանից հետո 3 քաղաքապետ է փոխվել, երեքն էլ Տարոն Մարգարյանի պատասխանն են ուղարկել ինձ՝ առանց մի ստորակետի տարբերության: Գրել են, թե ծրագրված է ձեր բակում ստորգետնյա գարաժներ կառուցել եւ վերականգնել խաղահրապարակը: 8 տարի է՝ սպասում եմ…

Լսում եմ Երեւանի քաղաքապետին, ասում է՝ Երեւանի մուտքերին շլագբաում դնենք, որ «համբալները» չկարողանան իրենց «opel»-ներով մտնեն քաղաք: Թող մտնեն վճարովի կայանատեղի, ապա իրենց ճանապարհը շարունակեն հանրային տրանսպորտով: Լրիվ՝ խելքի մարմնացում: Իբր Երեւանի տրանսպորտային «խուճապն» է ուզում կարգավորել: Տեսել ենք ձեր ձեռնահասությունը… Երեւանի կենտրոնը բեռնաթափեցի՞ք: Աշխարհում օրական միլիոններով ավտոմեքենա է արտադրվում, որոնց մի մասն էլ անխուսափելիորեն գալիս է Երեւան: Որ Երեւանը պատրաստ չէ դրան, որ համապատասխան փողոցներ ու շրջանցիկ ճանապարհներ չունի, ավտոարտադրողնե՞ն են մեղավոր: Թե բա՝ խելացի լուսացույցներ դնենք: Դրեք, ո՞վ է ձեզ խանգարում: Բայց մի փորձեք խնդիրը կարգավորելու փոխարեն ավելի բարդացնել՝ ճանապարհ փակելով, «շլագբաումներ» դնելով, քաղաքն անտանելի դարձնելով:

Լուծում առաջարկեմ: Միլիոններով ինքնապարգեւատրումներ տալու փոխարեն քաղաքացիներից գնեք նրանց հնամաշ մեքենաները եւ որպես ջարդոն ուղարկեք, ենթադրենք՝ Չինաստան: Դուք չե՞ք կարող դա անել, ուրեմն թույլ տվեք չինական որեւէ կազմակերպություն զբաղվի այդ գործով: Նրանք տեղում կուտիլացնեն մեքենան եւ, «բրիկետների» վերածելով, կտանեն՝ ուր պետք է: Վերջապես օրենք ընդունեք՝ Երեւանը ավտոմեքենաների այս խայտառակ ներմուծումից պաշտպանելու համար: Թե չէ՝ բիզնես եք մտածել՝ «շլագբաում» դնենք:

Էդիկ
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan
@hraparak.am

ՑՈՐԵՆ

ԲԱՑՄԱԹԻՎ ՃԱԽՈՂՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԶՐՈՅԻՑ ՑՈՐԵՆԻ ՀԱՐՑ Է ԼՈՒԾՈՒՄ

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Հայաստանի Հանրապետությունն ունի ցորենի անհրաժեշտ պաշարներ, կստանա «կայուն ցորեն», քաղաքացին կարող է չմտահոգվել: Այսպես էր ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն ԱԺ ընտրությունների քարոզարշավի ժամանակ պատասխանում լրագրողներին, որոնք Ռուսաստանից մատակարարումները դադարեցնելու սպառնալիքի մասին էին հարցնում եւ հատկապես՝ ցորենի ներկրման:

Այսօր, սակայն, պարզվում է՝ իրավիճակը ճգնաժամային է: Հուլիսի 8-ին Նիկոլ Փաշինյանը կառավարությունում խորհրդակցություն է անցկացրել՝ ցորենի հարցով, որի ընթացքում նույն Գեւորգ Պապոյանը վարչապետին ներկայացրել է Հայաստանի պարենային անվտանգության իրական պատկերը: Ըստ այդմ՝ Հայաստանում ցորենի ինքնաբավության մակարդակը, այսինքն՝ սեփական կարիքների համար արտադրվող ցորենի քանակը գտնվում է վերջին տարիների ամենացածր կետում: Երկրում առկա է լքված եւ չմշակվող գյուղատնտեսական հողատարածքների մեծ ծավալ: Հնչել են կատաստրոֆիկ վատ թվեր, որոնք վկայում են ցորենի տարեցտարի աճող դեֆիցիտի մասին:

Հայաստանի՝ ցորենով ինքնաբավության ընթացիկ մակարդակը 22,8 տոկոս է: Սա ավելի քան 2 անգամ պակաս է 10 տարի առաջվա մակարդակից: Այն ժամանակ ինքնաբավության աստիճանը եղել է 53.2%: Սպառվող ցորենի մոտ 77 տոկոսը ներմուծվել է ՌԴ-ից: Խորհրդակցության ժամանակ Նիկոլ Փաշինյանը փորձել է իր ենթականերից տեղեկանալ, թե որքան ցորեն կարելի է ցանել Հայաստանում, եւ կամ՞ն արդյոք ցորենի մշակման համար պիտանի հողատարածքներ: Նա նաեւ հանձնարարել է հստակ քարտեզագրել ցորենի մշակման համար հարմար, սակայն այս պահին չօգտագործվող գյուղատնտեսական հողերը եւ ներդրումային ծրագիր մշակել, որը թույլ կտա հասկանալ ցորենի արտադրության ընդլայնման իրական ներուժը: Հետաքրքիր է. արդյոք Փաշինյանը հիշո՞ւմ է, թե քանի անգամ է փորձել կարգավորել ցորենի հարցը, ու ոչինչ չի ստացվել, եւ ինչ հետեւություններ է արել, որ հիմա ստացվի:

Հիշեցնենք. 2024 թվականին կառավարությունը սուբվենցիոն ծրագրեր էր իրականացնում՝ ցորենի արտադրությունը խթանելու համար: 1 հեկտարի հաշվով ֆերմերներին տրամադրում էր ուղղակի գումարային աջակցություն. 120 հազար դրամ՝ հավաստագրված (էլիտա) սերմերի դեպքում, եւ 70 հազար դրամ՝ չհավաստագրված սերմերի դեպքում: Բայց աշնանացանի շրջանում որոշեց, որ չարժե գյուղացիներին փող տալ, քանի որ ցորենի բերքատվության շեշտակի աճ չի եղել, եւ պրոցեսը ծախսատար է, ու դադարեցրեց ծրագիրը, ինչն այն ժամանակ ֆերմերների դժգոհությունն առաջացրեց, իսկ Փաշինյանի կառավարությունն անցավ մեկ այլ անպտուղ ծրագրի, որը կոչվում էր «ինտենսիվ ցորենի մշակում»: Այսինքն՝ ավանդական «ամբարի սերմացուի» փոխարեն օգտագործվում էին հավաստագրված, հիվանդությունների նկատմամբ դիմացկուն եւ բարձրբերքատու սորտեր, ներդրվում էր անձրեւացման կամ կաթիլային ոռոգումը: Ակնկալվում էր, որ արդյունքում 1 հեկտարից 5-7 տոննա բերք կստացվի՝ ներկայիս 1.6-2 տոննայի փոխարեն: Այս արդյունքը դեռ չենք տեսել, եւ այս ծրագիրը եւս կարելի է ձախողված համարել: Ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է հսկայական ծախս, որը շարքային ֆերմերը չունի:

Մեկ այլ ձախողված նախաձեռնում՝ 2020-ին «Պետական նյութական ռեզերվի մասին» ՀՀ օրենքում մի քանի փոփոխություն արվեց: Թույլատրվեց, որ պետությունը պարենային անվտանգության պաշարները սեփական բազաներում պահելու փոխարեն կարողանա օգտագործել մասնավոր ընկերությունների պահեստները՝ պայմանագրային հիմունքներով: Մինչ այդ պետական ռեզերվներում էին պահվում այդ պաշարները:

Ասենք՝ Լֆիկը կամ մյուս գործարարներն իրենց ընկերություններում կարող են ռեզերվային քանակի հացահատիկ, շաքար, բրինձ պահել, իսկ պետությունը դրա համար նրանց գումար պետք է վճարեր: Սա պարտադիր չէր, բայցեւայնպես, դժգոհություններ հնչեցին, որ պետությունը վերահսկողություն է սահմանելու, ու բիզնեսի ազատությունը կաշկանդվելու է, որ մի քանի խոշորի փող տալով, պետությունը կստանա շուկայի մոնոպոլիզացիա, որ բյուջեից հսկայական միջոցներ են դուրս բերվելու եւ այլն: Արդյունքն ավելի բացասական էր, քան սպասումները: Համակարգը չաշխատեց, որովհետեւ խոշոր ներմուծողներից շատերը խուսափեցին պետության հետ պայմանագրեր կնքելուց, կառավարությունը փոքր վարձատրություն էր առաջարկում՝ պետական պաշարը պահելու ու պահեստները փաստացի «սառեցնելու» համար: Բացի այդ, պարզվեց, որ մասնավորը չունի բավարար քանակի ցորենի պահեստարաններ, հատուկ սառնարաններ, որոնք համապատասխանում են պետական ռեզերվի խիստ չափանիշներին: Եվ, ահա, այս բոլոր ձախողումներից հետո, որոնց արդյունքում երկրի պարենային անվտանգության ցուցանիշը 53%-ից գահավիժել է 22-ի, կառավարությունը փորձում է զրոյից ցորենի հարց լուծել՝ ֆերմերների, հանրության շրջանում վստահության դեֆիցիտի պայմաններում:

ՀԳ. *Նկատենք նաեւ, որ նման քննարկումն ինքնին խոսում է այն մասին, որ Նիկոլ Փաշինյանը տագնապած է եւ Ռուսաստանի հետ հարաբերությունների էլ ավելի վատացում է կանխատեսում, ուստի փորձում է պատրաստվել ամենաբարդ իրավիճակին, երբ ցորենի ներկրումը դադարեցվի, եւ Հայաստանը կանգնի հացահատիկի դեֆիցիտի առաջ:*

ՇԱՄԱԽՅԱՆ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԲԼՈՒՐՆԵՐՆ ԱՎԵՐԵԼ՝ ՏՈՆՆԱՆԵՐՈՎ ՔԱՐ ԵՆ ՀԱՆԵԼ

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Վերջին տարիներին Դիլիջանում զբոսաշրջությունը բավականին զարգացել է, տուրիստներին գրավում են Դիլիջանի մաքուր օդը, անաղարտ բնությունը: Սակայն անաղարտ բնությունը տեղացիների կողմից երբեմն խաթարվում, ավերվում է: Գլխավոր դատախազության հայցերով, դատարանի վճիռներով՝ Հայաստանի Հանրապետությանը, Դիլիջան համայնքին են վերադարձվում ապօրինի օտարված հողատարածքներ:

Ահա վերադարձված հողամասերից մեկը. Գլխավոր դատախազությունը 2025 թ. դեկտեմբերի 26-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Հիմնադրամի, երրորդ անձ՝ ՓԲ ընկերության՝ հողամասի կառուցապատման իրավունքը հարկադիր դադարեցնելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանի 2026 թ. հունիսի 15-ի վճռով հաստատվել է Գլխավոր դատախազության եւ Հիմնադրամի միջեւ կնքված հաշտության համաձայնությունը, որով Հիմնադրամը ՀՀ տիրապետությանն է վերադարձրել Տավուշի մարզի Դիլիջան համայնքում գտնվող՝ 67 հա մակերեսով «հատուկ պահպանվող տարածքներ» նպատակային եւ «բնապահպանական» գործառնական նշանակությամբ հողամասը: Հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 4 միլիարդ 578 միլիոն 981 հազար դրամ է (12 միլիոն 436 հազար ԱՄՆ դոլար):

Սակայն Դիլիջանում վերադարձված հողամասերը որքանո՞վ են պահպանվում պետության իրավասու կառույցների, Դիլիջան համայնքի, համայնքապետարանի կողմից: Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի վերին մասում, «Ճագարներ» տեղանքից դեպի աջ տանող հատվածում, հենց ճանապարհի եզրին բլուրներ են քանդել, հողի միջից տոննաներով քարեր հանել, տեղափոխել: Ըստ Դիլիջանից ստացված տեղեկությունների, բլուրներից հանված քարերը տեղացիներն օգտագործել են շինարարությունների մեջ: Բլուրները քանդելը, բնական լանդշաֆտներն ավերելը, հանված քարերը բեռնատարներով տեղափոխելը երկար ժամանակ կատարվել են: Ինչո՞ւ այդ ապօրինությունը չեն տեսել, կանխել էկոպարեկային ծառայության, բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի, Դիլիջանի համայնքապետարանի աշխատակիցները: Սա առաջին դեպքը չէ, որ Դիլիջանում բնությունն ավերում են, նախկինում եւս նման դեպքեր են տեղի ունեցել:

Դիլիջան քաղաքի բնակիչ Վարդան Մեջլումյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, խախտելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 206-րդ հոդվածի 1-ի կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաեւ 2011 թ. սեպտեմբերի 8-ին «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, 2021 թ. հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում Դիլիջան համայնքի Կալինինի փողոցի 3-րդ նրբանցքի թիվ 22 տանը հարակից՝ Դիլիջան համայնքի սեփականություն հանդիսացող 092-0001 ծածկագրով 442,0 քմ մակերեսով տեղամասում, այնտեղ գտնվող հողը հանելու-տեղափոխելու, պահպանելու եւ օգտագործելու կանոնները խախտելով, այլ կերպ փչացրել է այն, առաջացրել է հողի դեգրադացիա՝ հողի բերրի շերտի ոչնչացում, որի հետեւանքով Դիլիջան համայնքի շրջակա միջավայրին անզգուշությամբ պատճառվել է էական՝ 4 միլիոն 737 հազար 532 ՀՀ դրամի վնաս: 2023 թ. ապրիլի 26-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Արամ Մարտիրոսյանը վճռել է ճանաչել եւ հռչակել Վարդան Մեջլումյանի անմեղությունը 2003 թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ եւ նրան արդարացնել՝ արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով: Դատախազությունն այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել, սակայն վերաքննիչ դատարանն այն մերժել է:

4 տարբեր օրերի Վարդավառ են տոնում

Հուլիսի 12-ին Հայ առաքելական եկեղեցին տոնեց Վարդավառը՝ Քրիստոսի պայծառակերպության տոնը: Տավուշի մարզում Վարդավառն ավանդաբար տոնում են մեծ շուքով՝ ընտանիքներով, բարեկամներով, ընկերներով գնում են անտառ, աղբյուրների մոտ գտնվող տաղավարներում մեծ քեֆեր անում, գետերում լողանում, իրար ջրում: Սակայն հանրապետությունով մեկ Վարդավառը տարբեր օրերի են նշում՝ Տավուշում Վարդավառը նշում են հուլիսի 20-ից հետո եկող կիրակի օրը: Եթե այդ տարի հուլիսի 20-ից հետո 2 կիրակի է լինում, մի մասը ամսի 20-ից հետո առաջին կիրակի օրն է Վարդավառը տոնում, մյուսները՝ հուլիսի 20-ից հետո 2-րդ կիրակի օրը: Իսկ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար, Բերդ համայնքի Չինարի եւ Այգեձոր գյուղերում Վարդավառը տոնում են օգոստոսի կիրակի օրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ՝ ՔԱՎՈՒԹՅԱՆ ՆՈԽԱԶ». ԳԻՐՔ, ՈՐՆ ԱՆՑՅԱԼԻՑ ՀԱՐՑԵՐ Է ՈՒՂՂՈՒՄ ՆԵՐԿԱՅԻՆ

Թորգոմ Վեհապետյանի «Նոր սերունդը՝ քավության նոխազ» աշխատության առաջին հատորը նվեր ստացա: Սա երրորդ հրատարակությունն է՝ լրացուցիչ ծանոթագրություններով: «Նոր սերունդը՝ քավության նոխազ» ձեւակերպումն ինքնին հարց է առաջացնում. ինչո՞ւ է մի ամբողջ սերունդ ստիպված կրել նախորդ ժամանակների ծանր հետեւանքները, եւ ինչ դասեր պետք է քաղի ժողովուրդն իր պատմության ամենաբարդ էջերից:

Կարդալուց հետո եկա եզրակացության. սա պարզապես 1920 թ. ողբերգական իրադարձությունների նկարագրություն չէ, այլ փորձ՝ հասկանալու, թե ինչպես են ընդունվում ճակատագրական որոշումները, ինչ դեր են ունեցել դիվանագիտությունը, միջազգային ուժերի հարաբերակցությունը, քաղաքական հաշվարկը եւ սեփական սխալների գնահատումը: Հենց այս պատճառով աշխատությունը կարեւոր է ոչ միայն պատմությամբ հետաքրքրվողների, այլեւ յուրաքանչյուր հայ մարդու համար, ով մտածում է պետականության, անկախության եւ ապագայի մասին:

Վեհապետյանը պատկանում է այն հեղինակների շարքին, որոնց համար Հայաստանի նորագույն պատմությունը պարզապես ուսումնասիրության նյութ չէ: Նրա ուշադրության կենտրոնում այն հարցերն են, որոնք անմիջականորեն կապված են հայ ժողովրդի ազգային ճակատագրի հետ: Առաջին հատորը վերաբերում է Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին եւ ամենածանր փուլերից մեկին՝ 1920 թվականին: Հայաստանը գտնվում էր ծայրահեղ բարդ իրավիճակում: Մի կողմից՝ պատերազմի հետեւանքները, տնտեսական եւ ռազմական դժվարությունները, մյուս կողմից՝ միջազգային անկայունություն եւ մեծ տերությունների հակասություններ: Հայկական պետությունը փորձում էր գոյատեւել մի աշխարհում, որտեղ յուրաքանչյուր պետություն առաջին հերթին առաջնորդվում էր սեփական շահով: Հենց այդ պայմաններում էին ընդունվում այն որոշումները, որոնց հետեւանքները զգացվեցին հետագա տասնամյակներում:

Ռուսաստանը եւ հայկական դիվանագիտությունը: Գրքի կարեւոր թեմաներից մեկը հայ-ռուսական հարաբերությունների բարդ շրջանն է: 1917 թ. հեղափոխությունից հետո Ռուսաստանը հայտնվել էր նոր քաղաքական իրականության մեջ: Բոլշեւիկյան իշխանությունը փորձում էր ամրապնդել իր ազդեցությունը տարածաշրջանում: Այդ քաղաքականության մեջ կարեւոր դեր ունեին Ռուսաստանի հեղափոխական իշխանությունները՝ Լենինը, ԱԳ ժողովրդական կոմիսար Գեորգի Չիչերինը, դիվանագետ Լեւ Կարախանը, այլք: Հայկական կողմի առջեւ բարդ խնդիր էր դրված՝ ինչպես հարաբերություններ կառուցել Ռուսաստանի հետ, ինչպես պաշտպանել Հայաստանի շահերը եւ ինչպես կողմնորոշվել հին աշխարհակարգի փլուզման պայմաններում, երբ նորը դեռ ձեւավորված չէ: Վեհապետյանն անդրադառնում է նաեւ հայկական քաղաքական եւ դիվանագիտական շրջանակների գործունեությանը՝ ցույց տալով, թե որքան դժվար էր այդ տարիներին ճիշտ ընտրություն կատարել, երբ յուրաքանչյուր քայլ կարող էր ունենալ ծանր հետեւանքներ:

Վիլսոնյան Հայաստանի սպասումը: Սեւրի պայմանագրի ստորագրումը մեծ սպասումներ էր ծնել: Այն ընկալվում էր որպես պատմական արդարության վերականգնման հնարավորություն: ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը եւ Սեւրի փաստաթուղթը հայության մեջ հավատ էին առաջացրել, որ Հայկական հարցը ստանալու է լուծում: Բայց պատմությունն ասաց, որ միայն իրավական փաստաթուղթը բավարար չէ: Անհրաժեշտ են նաեւ քաղաքական կամք, ռազմական եւ դիվանագիտական աջակցություն: Վիլսոնյան ծրագիրը մնաց չիրականացած, որովհետեւ չստացավ միջազգային ուժային հենարան, որը կարող էր կյանքի կոչել: Այստեղ էլ առաջանում է գրքի կարեւորագույն հարցերից մեկը՝ արդյո՞ք Հայաստանը ճիշտ էր գնահատում իր հնարավորությունները, որոնք ուներ այդ վճռական պահին:

Բաց թողնված հնարավորություններ: Աշխատության առանցքային հարցադրումներից մեկը վերաբերում է 1920 թ. քաղաքական ընտրություններին: Այդ շրջանը միայն ռազմական պայքարի կամ արտաքին ճնշումների պատմություն չէր: Դա նաեւ դիվանագիտական ծանր ընտրությունների ժամանակաշրջան էր, երբ Հայաստանի ղեկավարությունն ու դիվանագետները փորձում էին կողմնորոշվել մի միջավայրում, որտեղ մեծ տերություններն առաջնորդվում էին միայն իրենց շահերով: Վեհապետյանն առաջ է մղում այն տեսակետը, որ հայկական քաղաքականությունը չափազանց մեծ հույսեր կապեց արեւմտյան պետությունների, հատկապես վիլսոնյան Հայաստանի ծրագրի հետ՝ միաժամանակ բավարար չափով չօգտագործելով Ռուսաստանի հետ հարաբերությունները կարգավորելու հնարավորությունները: Այս տեսակետի համաձայն՝ հայերի հիմնական խնդիրներից մեկը դարձավ այն, որ չափազանց երկար սպասեցին արտաքին երաշխիքների, մինչդեռ միջազգային իրավիճակն արագ փոխվում էր: Ռուսական ուղղությունը եւս պարզ ընտրություն չէր: Ռուսաստանը եւս ուներ աշխարհաքաղաքական նպատակներ եւ ձգտում էր հաստատել իր ազդեցությունը Հարավային Կովկասում: Վեհապետյանի եւ նրա տեսակետը կիսող հեղինակների մտքերը գնահատմամբ՝ հայկական կողմն այդ հնարավորությունները բավարար արագությամբ եւ վճռականությամբ չօգտագործեց: Սակայն արդարությունը պահանջում է հաշվի առնել ժամանակի բարդությունը: 1920 թ. գործիչները որոշումներ էին ընդունում ոչ թե արդեն հայտնի պատմական հանգամանքներում, այլ՝ անորոշության մեջ: Նրանք չգիտեին, թե որ ճանապարհն ինչ արդյունքի կհանգեցնի: Ուստի այդ շրջանի գլխավոր դասը միայն այն չէ, թե «որ կողմն էր պետք ընտրել»: Ավելի խոր հարցն այն է՝ ինչպես պետք է փոքր պետությունը գնահատի իր հնարավորությունները, չկորցնի ժամանակը եւ իր անվտանգությունը չկառուցի միայն խոստումների վրա: 1920 թ. փորձը ցույց տվեց, որ պատմական իրավունքները, արդար պահանջը եւ միջազգային աջակցությունն ինքնին բավարար չեն, եթե չեն ուղեկցվում ճիշտ հաշվարկով, արագ որոշումներով եւ պետական շահի հստակ գիտակցումով:

Ինչու է այս գիրքը կարեւոր այսօր: Աշխատության արժեքը միայն 1920 թ. պատմությունը ներկայացնելու մեջ չէ: Այսօր էլ Հայաստանը կանգնած է բարդ տարածաշրջանային եւ միջազգային խնդիրների առաջ: Նույն հարցերն են հնչում. ինչպես պահպանել պետականությունն ու անկախությունը, ինչպես ճիշտ գնահատել մեծ տերությունների շահերը եւ համադրել ազգային նպատակներն ու իրական հնարավորությունները, ինչպես ընդունել որոշումներ, որոնց հետեւանքները կարող են ազդել երկրի ապագայի վրա: Անցյալի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի խոհեմ լինել ապագայում: Պատմությունը միայն մեղավորներ փնտրելու համար չէ: Այն պետք է օգնի՝ հասկանալ պատճառները, գնահատել սխալները եւ գտնել այն դասերը, որոնք անհրաժեշտ են ապագայի համար: «Նոր սերունդը՝ քավության նոխազ»-ը հենց այդպիսի գիրք է: Այն չի տալիս միայն պատրաստի պատասխաններ, այլ ստիպում է մտածել: Ժողովուրդները չեն կարող փոխել իրենց անցյալը, բայց կարող են ճիշտ ընկալել անցյալը եւ դասեր քաղել անցյալից:

Մությունը պարզապես ուսումնասիրության նյութ չէ: Նրա ուշադրության կենտրոնում այն հարցերն են, որոնք անմիջականորեն կապված են հայ ժողովրդի ազգային ճակատագրի հետ: Առաջին հատորը վերաբերում է Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին եւ ամենածանր փուլերից մեկին՝ 1920 թվականին: Հայաստանը գտնվում էր ծայրահեղ բարդ իրավիճակում: Մի կողմից՝ պատերազմի հետեւանքները, տնտեսական եւ ռազմական դժվարությունները, մյուս կողմից՝ միջազգային անկայունություն եւ մեծ տերությունների հակասություններ: Հայկական պետությունը փորձում էր գոյատեւել մի աշխարհում, որտեղ յուրաքանչյուր պետություն առաջին հերթին առաջնորդվում էր սեփական շահով: Հենց այդ պայմաններում էին ընդունվում այն որոշումները, որոնց հետեւանքները զգացվեցին հետագա տասնամյակներում:

Դա է պատճառը, որ այս գրքի հրատարակությունը պարզապես մշակութային իրադարձություն է: Դա հնարավորություն է՝ նորից ուսումնասիրելու մեր պատմության բարդ էջերը, հասկանալու մեր անցած ճանապարհը եւ ավելի գիտակցված կառուցելու ապագան:

ՀԳ. *Թորգոմ Վեհապետյանի աշխատությանը բարձր գնահատական է տվել Շահան Նաթալին՝ 20-րդ դարի հայ ազգային-քաղաքական կյանքի հայտնի գործիչներից մեկը: Գրող, հրապարակախոս, ազգային հարցերով ակտիվորեն զբաղվող անհատականությունը, որի գործունեությունը կապված էր հայ ժողովրդի պատմական իրավունքների, ազգային ինքնագիտակցության հետ, Վեհապետյանի գիրքը համարել է ոչ միայն պատմական իրադարձությունների նկարագրություն, այլեւ ազգային մտածողության եւ անցյալի դասերը հասկանալու փորձ:*

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԻՆՉ ՖԻԼՄԵՐ ԴԻՏԵԼ ԱՄՌԱՆԸ

Ամառային արձակուրդները կարեւոր են յուրաքանչյուրիս համար: Հատկապես դրանք լավ են անցնում, երբ ընտանիքի բոլոր անդամները միասին են: Արձակուրդի երեկոները, ինչպես նշում են հոգեբանները, հարմար են համատեղ ֆիլմերի դիտումներ կազմակերպելու առումով: Դրանք օգնում են միասին ժամանակ անցկացնելուն, հաճելի պահեր ունենալուն, նաեւ՝ հաճելի հիշողություններին անդրադառնալուն: Լավ ֆիլմը կարող է միավորել ընտանիքի տարբեր սերունդների մարդկանց, պարգեւել վառ էմոցիաներ, զրույցի առիթ դառնալ:

Ըստ մասնագետների, նախ կարեւոր է արձակուրդային երեկոներին ընտանեկան արկածային կինոնկարների դիտումը: Դրանք հետաքրքիր են թե՛ երեխաներին, թե՛ մեծահասակներին: Լի են հումորային պահերով, գեղեցիկ բնապատկերներով, գրավիչ իրադարձություններով եւ հիշեցնում են իսկական ընկերության, փոխըմբռնման եւ խիզախության մասին:

Խորհուրդ են տալիս «Հետ՝ դեպի ապագա», «Յուրայի ժամանակաշրջանի պուրակը», «Ջումանջի» կինոնկարները: Հետաքրքիր են նաեւ «Փադինգթոնի արկածները» եւ «Փիթեր Փենը»: Բնության եւ կենդանիների սիրահարները կարող են ընտրել «Մենք գնել ենք կենդանաբանական այգի», «Ազատեք Վիլիին», «Հաթիկո. ամենահավատարիմ ընկերը» եւ «Բելն ու Սեբաստիանը» ժապավենները: Այս կինոնկարները ոչ միայն գրավիչ են ու հետաքրքիր ժամանց են ապահովում, այլ նաեւ սովորեցնում են կարեկցել, պատասխանատվության զգացում ունենալ, սիրել շրջակա միջավայրն ու հոգ տանել դրա նկատմամբ: Ճամփորդությունների սիրահարները կարող են ընտրել «Վոլթեր Միթիի աներեւակայելի կյանքը», «80 օրում՝ աշխարհի շուրջը», «Միան եւ սպիտակ առյուծը» կինոնկարները: Սրանք ընտանիքի անդամներին կպարգեւեն նոր տպավորություններ, կհիշեցնեն, թե ինչ բան են իրական արկածները, եւ ցանկություն կառաջացնեն ճամփորդելու, աշխարհը տեսնելու: Թեթեւ կատակերգություններ նախընտրողները կարող են դիտել «Գիշերը՝ թանգարանում», «Տիկին Դաուֆայերը», «Փիթեր ճագարը» կինոնկարները: Սրանք էլ հումոր ու բարություն ճառագող ժապավեններ են՝ հարմար ընտանեկան դիտման համար: Չպետք է մոռանալ նաեւ անիմացիոն ֆիլմերը: Ժամանակակից անիմացիան արդեն վաղուց դադարել է զուտ մանկական լինելուց: «Գլուխկոտրուկը», «Կոկոյի առեղծվածը», «Դեպի վեր», «Մոանան», «Էնկանտոն» կամ «Ինչպես վարժեցնել վիշապին», կամ «Կենդանիների քաղաքը» լուրջ թեմաներ են արծարծում ընկերության, ընտանիքի, հասունացման նոր կոչման որոնումների մասին: Ու այս ամենը ներկայացված է մեծ վարպետությամբ: Կարելի է ներառել նաեւ «Հարրի Փոթերի» շարքը կամ «Աստղափոշին» եւ այլն, որոնք կարող են արձակուրդը դարձնել իրապես ուրախ եւ հաճելի:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԸ ՀԱՄԱՏԵՂ ԿՈՉ ԱՐԵ՞Լ ԵՆ ԻՍՐԱՅԵԼԻՆ՝ ՉԵՃԱՆԱՉԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Ի՞ՆՉ ԵՆ ՑՈՒՅՑ ՏԱԼԻՍ ՓԱՍՏԵՐԸ

Սոցիալական ցանցերում մի տեղեկություն կարդացի, որն առաջին հայացքից անչափ զարմանալի թվաց. իբր Հայաստանն ու Ադրբեջանը համատեղ կոչ են արել Իսրայելին՝ չճանաչել Հայոց ցեղասպանությունը: Առաջին արձագանքս էր. «Այս ո՞ւր հասանք, մի՞թե դա հնարավոր է»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Փորձեցի բաց աղբյուրներում գտնել դրա մասին վկայող որեւէ պաշտոնական հայտարարություն կամ հաղորդագրություն: Բնականաբար՝ չգտա: Փոխարենը գտա այն հրապարակումը, որը, ամենայն հավանականությամբ, նման մեկնաբանությունների համար հիմք է ծառայել: Խոսքն իսրայելական Ynet լրատվամիջոցի հոդվածի մասին է: Հոդվածի հիմնական թեման Իսրայելի եւ Ադրբեջանի հարաբերություններն են: Ըստ հրապարակման, Բաքուն Իսրայելի՝ Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչումը համարում է «կարմիր գծի հատում» եւ այդ հարցի շուրջ լուրջ դժգոհություն է հայտնել: Հոդվածում նաեւ նշվում է, որ Ադրբեջանի պաշտոնյաները կարծում են, թե նման քայլը կարող է վնասել երկու երկրների (Իսրայելի եւ Ադրբեջանի) ռազմավարական հարաբերություններին: Սակայն հոդվածի մեխը վերաբերում էր Հայաստանին: Ynet-ը նախ նկատում է, որ Հայաստանի ներկայիս իշխանությունները Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը չեն դիտարկում որպես արտաքին քաղաքական առաջնահերթություն, ինչից էլ եզրակացնում են, որ Իսրայելում կարող է հարց առաջանալ՝ արժե՞ արդյոք հարաբերությունները սրել Ադրբեջանի հետ, եթե նույնիսկ Հայաստանի ղեկավարությանը չի հետաքրքրում այս ճանաչումը, եւ նրանք չեն պնդում այդ հարցը: Իհարկե, հոդվածում չի խոսվում, թե Երեւանն ու Բաքուն միասին դիմել են Իսրայելին կամ միասնական դիրքորոշում են արտահայտել: Նման փաստ չկա: Այդուհանդերձ, հարցն այստեղ չի ավարտվում: Քննարկման առարկա են դարձել նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրապարակային հայտարարությունները եւ տարբեր լրատվամիջոցներում ամենից հաճախ մեջբերվող միտքը. «Մեր պաշտոնական դիրքորոշումն այն է, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն այսօր մեր արտաքին քաղաքական առաջնահերթությունների շարքում չէ»: Այս հայտարարությունը տարբեր մեկնաբանությունների տեղիք է տվել: Ոմանք այն ընկալում են որպես արտաքին քաղաքական առաջնահերթությունների փոփոխության մասին հայտարարություն: Մյուսները կարծում են, որ նման ձեւակերպումները միջազգային լսարանի մոտ կարող են ստեղծել տպավորություն, թե Հայաստանի համար ճանաչման հարցն այլեւս կարեւոր չէ:

Հենց սա է Ynet-ի հոդվածի ողջ իմաստը: Եթե Ադրբեջանը բացահայտ դեմ է Իսրայելի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, մյուս կողմից միջազգային մամուլը գրում է, որ Հայաստանը եւս այդ հարցը չի համարում առաջնահերթ, ապա արտաքին դիտորդի մոտ կարող է ձեւավորվել այնպիսի ընկալում, որ երկու երկրների մոտեցումներն այսօր, թեկուզ տարբեր պատճառներով, բայց գործնականում նույնն են: Արդյո՞ք այդ ընկալումն ամբողջությամբ համապատասխանում է իրականությանը: Այս ֆոնին բնական հարց է առաջանում. իսկ եթե Իսրայելի Կնեսետը ճանաչի Հայոց ցեղասպանությունը, դա ո՞ւմ կարող է վնասել: Պատմական փաստը դրանից չի փոխվի: Հայոց ցեղասպանությունը պատմագիտական իրողություն է՝ անկախ այս կամ այն երկրի խորհրդարանի որոշումից: Սակայն Իսրայելի ճանաչումը կունենա բարոյական եւ քաղաքական կարեւոր նշանակություն: Որպես Հոլոքոստի հիշողության պահպանման հարցում առանձնահատուկ դեր ունեցող պետություն՝ Իսրայելի դիրքորոշումը միջազգային հանրության համար ունի յուրահատուկ կշիռ: Այդ պատճառով նման որոշումը շատերի համար կլինի ոչ միայն քաղաքական, այլեւ պատմական արդարության եւս մեկ հաստատում:

Այսօր հրապարակված փաստերը հիմք չեն տալիս պնդելու, թե Հայաստանն ու Ադրբեջանը համատեղ կոչ են արել Իսրայելին՝ չճանաչել Հայոց ցեղասպանությունը, բայց առկա փաստերը, ՀՀ իշխանությունների դիրքորոշումը, բարձրաձայնած տեսակետը հիմք են տալիս քննարկելու մեկ այլ կարեւոր հարց. արդյո՞ք Հայաստանի ներկայիս քաղաքական ուղղորդումը միջազգային գործընկերների մոտ չեն ստեղծում այնպիսի ընկալում, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն այլեւս Հայաստանի առաջնահերթությունը չէ, եւ հետագա ճանաչմանը հենց ՀՀ իշխանությունն է խոչընդոտում: Եվ եթե Կնեսետը հետագայում չընդունի իր իսկ կառավարության ընդունած որոշումը եւ չճանաչի Հայոց ցեղասպանության փաստը, արդյո՞ք դրա մեղավորը հենց Հայաստանի իշխանությունները չեն լինելու: Թերեւս հենց այս հարցն է արժանի քննարկել:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 14.07.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Ո՞Վ Է ՆԻԿՈԼԻՆ ԴԱՏԻ ՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆ

Վախթանգ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

«Հրապարակ»-ը հայտնում է, որ Լուսինե Ավագյան անուն-ազգանունով քաղաքացին քաղաքացիական հայց է ներկայացրել ընդդեմ վարչապետ Փաշինյանի: Հայցվորը դատարանից խնդրում է ճանաչել, որ վարչապետի տարածած տեղեկատվությունն առ այն, թե, բացառությամբ «Քաղպայմանագրի», «մյուս քաղաքական ուժերը ստացել են 100 տոկոսով ընտրակաշառքով քվե», իր մասով չի համապատասխանում իրականությանը եւ արատավորում է իր պատիվն ու արժանապատվությունը: Միաժամանակ պահանջում է, որ դատարանը նրան պարտադրի՝ իրեն վճարել 3-ական միլիոն դրամ՝ որպես զրպարտության եւ վիրավորանքի արդյունքում պատճառված վնասների փոխհատուցում:

Դատական տեղեկատվական DataLex համակարգում որոնում տալը բերեց գործի համարը՝ ԵԴ2/7955/02/26, ինչպես նաեւ՝ դատավորի անուն-ազգանունը՝ Նաիրա Վազգենի Ավետիսյան: Ճշտեցի նաեւ 2008 թվականից գործող դատավորի վարկանիշը. այն կազմում է 16 միավոր: ՀՀ փաստաբանների պալատի գործող անդամների կողմից դատավորներին տրվող ամենաբարձր վարկանիշը 125 (դրական) միավորն է՝ տրված Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Արման Հովհաննիսյանին: Իսկ դա ենթադրում է, որ առաջին ատյանում Լուսինե Ավագյանի հայցը բավարարելու հավանականությունը, կոպիտ հաշվարկով, կազմում է 12-13 տոկոս: Չմոռանանք, որ դրական արդյունքի դեպքում առկա է բողոքարկման հնարավորություն՝ ավելի բարձր դատական ատյաններում:

Ի դեպ, ամենացածր (-31 (բացասական) միավոր) գնահատականը տրվել է Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր եւ Բարձրագույն դատական խորհրդի անդամ Արմեն Դանիելյանին: Իսկ ընդհանրապես՝ բացասական միավոր ստացած դատավորների քանակը 30-ն է: Ամենացածր վարկանիշով դատավորների եռյակը, Արմեն Դանիելյանից բացի, ներառում է ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր Սեդա Սաֆարյանին եւ Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արտակ Կարապետյանին: Բացասական միավորով մյուս անձը ԲԴԽ անդամ Երանուհի Թումանյանցն է (-9 միավոր):

Ասեմ, որ ես էլ եմ նման բան մտածել, բայց ծանրութեթեւ անելով այդ գործի հեռանկարը՝ հրաժարվեցի այդ գաղափարից: Հատկապես որ հոգեբանորեն բարդ է նման քայլի դիմելը 67 տարեկանում: Դրա համար անհրաժեշտ են շատ ավելի երիտասարդ, իրականության նկատմամբ ռոմանտիկ պատկերացումներ ունեցող անհատներ: Իզուր չէր Մաքսիմ Գորկին իր «Պառավ Իզերգիլը» պատմվածքում, ի դեմս անձնազոհ Դանկոյի («Դանկոյի սիրտը»), հենց երիտասարդի կերպար ներկայացնում:

Համացանցում համարձակ ընդդիմադիր տիկնոջ տվյալների փնտրտուքը բերեց հետաքրքիր արդյունքի: Լուսինե Աբոյի Ավագյան անուն-ազգանունն առկա է 2022-ին ԲԴԽ նախագահ Գ. Ջհանգիրյանի կողմից ԱԺ նախագահ Ա. Սիմոնյանին ներկայացված՝ տարբեր ատյանների դատավորների թեկնածուների ցուցակներում: Սակայն, ինչպես երեւում է, ՔՊ-ականները չեն հաստատել վերջինիս թեկնածությունը: Տիկին Ավագյանը փաստաբան է, Փաստաբանների պալատի անդամ, «Էլ Էյ խորհրդատվական գրասենյակ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրենը: Եվ եթե հենց նա է հայցվորը, ապա այս գործը կարող է ոչ միայն հետաքրքիր լինել, այլեւ ավելի գործուն ազդեցություն ունենալ հետագա ներքաղաքական զարգացումների առումով:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am